666-ը կներկառուցվի, համարը թաքցված, մի չիպի մեջ, որը կստիպեն ձեզ ընդունել ինչպես ցանկացած տեսակի վակցիանացիան կընդունեիք

Ուրբաթ, 1 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 08:15

Իմ սիրելի աղջիկ, **հակաքրիստոսն արդեն նախապատրաստում է խաղաղության իր պլանը,** որը նա շուտով կներկայացնի, երբ Միջին Արևելքում պատերազմները դառնան համընդհանուր, և երբ ցավն ու սարսափելի տառապանքները նշանակեն, որ հույսի նշույլ չկա:
Այդ ժամանակ նա հանկարծ կհայտնվի և իրեն կհռչակի աշխարհում որպես խաղաղության մարդ, մի պայծառ գոհար, որը կփայլի խավարի միջից:
Երբ նա հայտնվի, կերևա որպես բոլոր ժամանակների **ամենից խարիզմատիկ քաղաքական առաջնորդը:**
Նրա գեղեցիկ, գրավիչ և հոգատար անհատականությունը կհիմարացնի մարդկանց մեծամասնությանը:
Նրանից սեր և կարեկցանք կհոսի և նա քրիստոնյա կթվա: Ժամանակի հետ նա շատ հետևորդներ կքաշի դեպի իրեն, որոնց թիվը կավելանա, որպեսզի **դառնա Ինձ պես՝ Մեսիայի պես:**
Նրան կտեսնեն ազգերի մեջ միասնություն քարոզելիս և կսիրեն աշխարհի գրեթե բոլոր երկրներում:
Հետո կերևան նրա գերբնական հմտությունները: Շատերը կհավատան, թե նրան ուղարկել է Իմ Հայրը, և որ նա Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, աշխարհի Փրկիչը:
Նրանք կաղոթեն նրան, կսիրեն նրան, իրենց կյանքը կտան նրա համար, իսկ նա կծիծաղի և կծաղրի նրանց, երբ նրանք չեն կարողանա տեսնել իրեն:
Սա կլինի բոլոր ժամանակների ամենամեծ խաբեությունը, և այդ պլանը նպատակ ունի գողանալու ձեր հոգիները, հեռացնելու ձեզ Ինձնից:
Նա և Կեղծ Մարգարեն, ով կնստի ինչպես Թագավոր Պետրոսի Աթոռին, գաղտնաբար կնյութեն մեկ համաշխարհային կրոն:
Սա կերևա որպես քրիստոնյա տեսակի կրոն, որը սեր է քարոզում: Այնուամենայնիվ այն չի քարոզի սեր միմյանց հանդեպ, որը գալիս է Աստծուց: Դրա փոխարեն այն կքարոզի սեր և հավատարմություն հակաքրիստոսին և սեր սեփական անձի հանդեպ:
Պղծությունն այդտեղ կանգ չի առնի, քանի որ երբ նրանք հմայեն Աստծո զավակներին, գրոհը կսկսվի:
Հանկարծ բոլորին կխնդրեն ընդունել հավատարմության մեկ համաշխարհային Նշանը: Մի միավորված աշխարհ ուր բոլոր մարդիկ պետք է մասնակցություն ունենան:
Այն կվերահսկի ձեր փողը, սննդին ձեր հասանելիությունը և թե ինչպես ապրել:
Օրենքները, դրանցից շատերը, կնշանակեն որ դուք դառնում եք բանտարկյալներ:
Ձեր խցի բանալին, որը ձեզ կպահի նրանց վերահսկողության տակ, կլինի Գազանի Նշանը:
666-ը կներկառուցվի, համարը թաքցված, մի չիպի մեջ, որը կստիպեն ձեզ ընդունել ինչպես ցանկացած տեսակի վակցինացիան կընդունեիք:

Հենց որ այն ներարկվի, կթունավորի ոչ միայն ձեր միտքն ու հոգին, այլև ձեր մարմինը: Քանի որ այն կառաջացնի մի ժանտախտ, որը նախատեսված է աշխարհի բնակչության մեծ մասին վերացնելու համար:
Դուք չպետք է ընդունեք Նշանը: Դրա փոխարեն Ես կասեմ ձեզ ինչ անել:
Շատերը կընդունեն Նշանը, քանի որ անօգնական կզգան:
Կենդանի Աստծո Կնիքը՝ Իմ Խաչակրաց արշավանքի աղոթքը (33) կլինի ձեր փրկապարանը:
Երբ դուք ստանաք Իմ Հավիտենական Հոր կողմից ձեզ տրված Իմ Պշատպանության Կնիքը, դուք ստիպված չեք լինի ընդունել Նշանը:
Ձեզ ձեռք չեն տա: Ձեր տունը չեն տեսնի, չեն փնտրի, ոչ էլ թիրախ կդարձնեն, քանի որ այն անտեսանելի կլինի Սատանաի բանակի աչքին:
Ձեզ պետք կլինի սնունդը թաքցված պահել, որը կբավականացնի մի քանի տարի: Ձեզ պետք կլինի աճեցնել ձեր սեփական բերքը, պահեստավորել ձեր սեփական ջուրը և ձեր շուրջը պահել բոլոր Սուրբ պատկերները:
Իմ Մնացորդ Եկեղեցին կաճի և կտարածվի, և ձեզ ապաստան կտրվի, եթե դրա կարիքը լինի:
Շատ բան պետք է պլանավորել հիմա:
Նրանք, ովքեր ծիծաղում են քո արածի վրա կամ ասում, իսկապե՞ս Հիսուսը խնդրում է դա անել: Մի՞թե Նա չի տալիս Իր բոլոր հետևորդներին այն, ինչի կարիք նրանք ունեն:
Նույնիսկ մեկ հացը և մեկ ձուկը կարող են բազմապատկվել: Ուրեմն նշանակություն չունի, որ դուք միայն մի քիչ սնունդ ունեք, քանի որ Ես կպաշտպանեմ ձեզ և դուք ապահով կլինեք:
Շատ աղոթեք այն հոգիների համար, ովքեր չեն կարողանա խուսափել Նշանից:
Այդ անմեղ հոգիները, ովքեր շնորհի վիճակում են, կփրկվեն երբ նրանց պարտադրեն ընդունել չիպը:
Մնացածները պետք է պլանավորեն, որպեսզի պաշտպանեն իրենց ընտանիքը և հավատարիմ մնան Սուրբ Հաղորդությանն ու Պատարագին:
Երբ հակաքրիստոսը ոչնչացնի բոլոր կրոնները, **միակ զենքերը, որոնց դեմ նա անօգնական կլինի, Սուրբ Պատարագն ու Սուրբ Հաղորդության մեջ հացի ու գինու փոխակերպումը կլինեն:**
Իմ Պատարագները պետք է շարունակվեն: Ձեզնից նրանք, ովքեր գիտեն այս մասին, հիմա պետք է հավաքվեն մեծ թվով և սկսեն նախապատրաստությունները:
Որքան շուտ նախապատրաստվեք, այնքան շատ շնորհներ կտրվեն ձեզ՝ ավելացնելու ձեր շարքերը աշխարհով մեկ:
Ժայռը կդրվի նոր շենքի կառուցման հետ, որը նրանց ասելով կլինի Իմ Նոր Տաճարը: Բայց դա ճշմարիտ չէ:
Սակայն երբ հալածանքն ավարտվի, **Իմ Մնացորդ Եկեղեցին և Իմ Ընտրյալ Ժողովուրդը կվերակառուցեն Տաճարը, և Իմ Նոր Երուսաղեմը ներքև կիջնի Երկնքից:**
Նա ցած կիջնի փառքով: Փողերը կլսվեն Երկնքում և երկրի վրա միևնույն ժամանակ:
Իսկ հետո Ես կգամ: Դու, աղջիկս, կազդարարես Իմ ժամանումը, և շատերը կընկնեն գետնին և լաց կլինեն թեթևացած, սիրով և ուրախությամբ հափշտակության մեջ:
Քանի որ վերջապես այդ պահը, որին նրանք սպասում էին: Երկինքը կլուսավորվի, որոտը կդղրդա, և հրեշտակների խմբերը կերգեն քաղցր միաբանությամբ, քանի որ Աստծո բոլոր զավակները կողջունեն Ճշմարիտ Մեսիային:
Ես՝ Հիսուս Քրիստոսը, կգամ դատելու: Եվ Երկինքն ու Երկիրը կդառնան մեկ:

Նոր փառահեղ ճոխությունը, նորացված երկիրը կմխրճվի, և Նոր Դրախտը կգրկի բոլոր նրանց, ում անունները Ապրողների Գրքում են, և ովքեր կմիավորվեն որպես մեկ:
Եվ մինչ մեղքի բծից աղտոտված հին աշխարհի վերջը պետք է գա, Նոր Դարաշրջանը միայն սկսվում է:
Սա է, որին դուք պետք է ձգտեք: Սա է, որ տրվում է ձեզ որպես ձեր բնական ժառանգության մաս:
Միայն կենտրոնացեք բոլոր հոգիների փրկության վրա:
Ահա թե ինչու պետք է անտեսեք ձեզ ներկայացվող խոչընդոտները: Հալածանքը: Ցավը: Չարի սարսափը՝ ուրիշների ձեռքով: Միայն հոգիներ փրկելը նշանակություն ունի:
Ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Լա Սալետում Ես բացահայտեցի այդ վայրագությունները փոքրիկ երեխաներ Մելանիին և Մաքսիմինին

Շաբաթ, 2 հունիսի, 2012թ, առավոտյան ժ 11:00
Զավակս, կարևոր է որ բոլոր նրանք, ովքեր հավատում են Իմ Որդուն, **աղոթեն զորության և տոկունության շնորհների համար այս ժամանակ:**
Այս պատգամների միջոցով ձեզ բացահայտվող գիտելիքը, զավակներս, ձեզ օգնելու համար է որպեսզի նախապատրաստվեք:
Որպես Աստծո բանակ, երբեք չզգաք, թե անկարող կլինեք դիմակայել չար ռեժիմին, որը պատրաստվում է շուտով երևալու աշխարհում:
Միշտ հիշեք Իմ Սուրբ Վարդարանի ուժը:
Միշտ հիշեք, որ Իմ Հոր ուժն ամենամեծն է:
Ոչ մի զորություն այնքան ուժեղ չէ, որ կարողանա պարտության մատնել Աստծո Ամենափառապանծ Զորությունը:
Երբ դուք Աստծո ճշմարիտ զավակ եք, երբ գալիս եք Հոր մոտ Իմ Որդու միջոցով, դուք պաշտպանված կլինեք:
Վախն առաջանում է չիմացածից, սակայն այն կարող է առաջանալ նաև երբ ճշմարտությունն է բացահայտվում:
Թույլ տվեք, որ խաչակրաց արշավանքի աղոթքների միջոցով ձեզ տրվող շնորհները բերեն ձեզ մտքի խաղաղություն և հոգու զորություն, որ առաջ գնաք հոգիների փրկության համար:
Որքան շատ հոգիներ դարձի գան Իմ Որդու սիրո հանդեպ, այնքան ուժեղ կլինի ձեր խաչակրաց արշավանքը:
Սիրեք միմյանց և միավարվեք աղոթքի մեջ՝ օգնելու համար փրկել Աստծո զավակներին հակաքրիստոսից:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ յուրաքանչյուր հոգի բավարար չափով քաջ լինի նրա թունավոր նշանը մերժելու համար:
Այնքան վաղուց Լա Սալետում Ես բացահայտեցի այդ վայրագությունները փոքրիկ երեխաներ Մելանիին և Մաքսիմինին: Շուտով այդ մարգարեությունների իրականացման ժամանակը կգա:

Այդ երեխաներին ասվել է չար պլանների մասին, և Իմ ասածն ընդունվել է: Հիմա դուք, զավակներս, պետք է ընդունեք, որ այդ իրադարձությունները պետք է տեղի ունենան:
Դուք պետք է շատ աղոթեք՝ թուլացնելու և մեղմելու համար այդ պլանի մեծ մասը, որը մարդկությունը ստիպված է կրել:
Քաջ եղեք, զավակներս:
Վստահեք Իմ Որդուն և թույլ տվեք Նրան ձեզ ուղղություն տալու ազատությունը, ինչպես որ Նա պետք է /անի/. Որպեսզի հոգիները կարողանան փրկվել գազանի ճանկերից:
Ձեր Սիրող Մայր
Մայր Փրկության

Հիսուս. Երբեք չտատանվեք: Երբեք չկասկածեք Իմ Պաշտպանության Ձեռքին:

Շաբաթ, 2 հունիսի, 2012թ, երեկոյան ժ. 09:00

Իմ սիրելի աղջիկ, երբ Իմ հետևորդները թույլ են տալիս Ինձ հեղեղել իրենց հոգիներն Իմ անվերապահ սիրով, Ես նրանց ներսում կվառեմ մի զորություն, որը կվախեցնի նրանց:
Եկեք Ինձ մոտ վստահող երեխաների պես՝ պարզ ու բաց սրտով, առանց ակնկալիքների, և Ես կբերեմ ձեզ մի խաղաղություն, որը դուք ուրիշ ոչ մի տեղ չեք գտնի:
Մինչ Ես սգում եմ այն բանի համար, թե ինչպես է չարիքն ու ագահությունը բռնել աշխարհը, Ես նաև լի եմ ուրախությամբ այն մաքուր սիրո պատճառով, որն Իմ հետևորդները ցույց են տալիս Իմ՝ իրենց Հիսուսի հանդեպ:
Ինչպես են նրանք Ինձ սփոփանք, հանգստություն բերում, և ինչպես եմ Ես ցանկանում գրկել նրանց Իմ բազուկների մեջ:
Ինչքան եմ Ես ցանկանում, որ նրանք լսեն, թե Ես ինչպես եմ ասում, որ սիրում եմ իրենց:
Ինչպես եմ սպասում այն օրվան, երբ Ես կերկարեմ Իմ ձեռքը, կբռնեմ նրանց ձեռքն Իմի մեջ և կտանեմ նրանց Իմ Նոր Թագավորություն, ուր նրանք կգան տուն՝ Ինձ մոտ, վերջապես:
Այդ օրը հեռու չէ:
Իմ բոլոր հետևորդներին. Դուք պետք է լսեք Ինձ հիմա:
Դուք պետք է ուժեղ լինեք և տոկուն առջևում գտնվող փորձությունների ժամանակ և երբեք չհուսահատվեք:
Դեպի Իմ Թագավորություն տանող ճանապարհով քայլելու ընթացքում, որը փորագրված է ձեզ համար, դուք կվնասվեք: Ձեզանից շատերը թակարդը կընկնեն և կսայթաքեն:
Ձեզանից ոմանք ետ կվազեն իրենց եկած ճանապարհով:
Մյուսները կնստեն, տեղի կտան և կմնան իրենց ուղևորության սկզբի և Հավիտենական Կյանքի դարպասների միջև: Այնքան որ կթուլանա նրանց հավատը իրենց դիմակայող խոչընդոտներից:

Ավելի ուժեղները անվախ կլինեն: Նրանք կցանկական առաջ մղվել և էներգիայի յուրաքանչյուր ունցիա օգտագործեն Խաղաղության Նոր Դարաշրջան մտնելու համար:
Ոչինչ չի կանգնի նրանց ճանապարհին: Նրանք կիմանան, թե ինչպես դիմակայեն առջևում սպասվող տառապանքներին: Նրանք կիմանան, թե ինչպես կռվել թշնամու դեմ: Քիչ վախով իրենց սրտում, նրանք կլսեն Իմ կողմից իրենց տրվող յուրաքանչյուր ցուցումը:
Նրանք միշտ պետք է ձգտեն ետ գնալ և տանել նրանց, ովքեր ավելի թույլ են: Նրանց, ովքեր ավելի շատ են վախենում: Նրանք պետք է իրենց ուսերին տանեն նրանց, ովքեր չեն ցանկանում և արիություն չունեն ոտքի կանգնելու Իմ Անվամբ:
Նրանք, ովքեր կմերժեն ձեր օգնությունը, կմնան ետևում և կդառնան Գազանի Թագավորության մի մասը, որից փախուստ չկա:
Երբեք չտատանվեք:
Երբեք չտատանվեք: Երբեք չկասկածեք Պաշտպանության Իմ Ձեռքին:
Եթե դուք ամեն ինչ ենթարկեցնեք Իմ Սուրբ Կամքին, Ես կհոգամ ամեն ինչի մասին:
Վստահեք Ինձ: Հետևեք Ինձ:
Ժամանակը կարճ է, սակայն բավականին ժամանակ կա նախապատրաստվելու համար առջևում սպասվող մարտին:
Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Երբեք մի մոռացեք Իմ Սիրո զորությունը:
Ձեր սիրող Փրկիչ
Թագավոր Փրկության
Հիսուս Քրիստոս

Անցկացրեք հունիս ամիսը հանդարտ մտահայեցության մեջ՝ ինչպես հանձնարարել է Իմ Սիրելի Մայրը

Կիրակի, 3 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդները պետք է **անցկացնեն հունիս ամիսը հանդարտ մտահայեցության մեջ, ինչպես հանձնարարել է Իմ սիրելի Մայրը:**
Այս ամիսն այն ժամանակն է, երբ Դարձի Խաչակրաց աղոթքների միջոցով **շատ մարդիկ կարող են ստանալ ակնթարթային դարձի շնորհները** այն մարդկանց կողմից արված զոհողությունների միջոցով, ովքեր պատասխանել են Իմ Մորը՝ Փրկության Մորը:
Դուք պետք է հանդարտ լինեք այս ամիս:
Խնդրում եմ, Ես կոչ եմ անում ձեզ, որքան հնարավոր է շատ այցելել ձեր եկեղեցիները՝ աղոթելու համար Իմ Աստվածային Գթասրտության աղոթքը ժամը 3-ին:
Կաթոլիկներին խնդրում եմ ստանալ Իմ Սուրբ Հաղորդությունն ամեն օր, եթե հնարավոր է, այս ամսվա ընթացքում:
Քանի որ այս ամիսը կլինի այն ժամանակը, երբ ավարտվում են այն պլանները, որոնք լուռ կերպով նյութվում են գաղտնաբար՝ Միջին Արևելքում անհանգստությունն ավելացնելու համար:
Ուժեղ եղեք: Համբերատար եղեք: Սրտով խոնարհ եղեք:

Ինձ ենթարկեք ձեր կամքը և առաջարկեք ձեր փարձություններն ու զոհողությունները բոլոր մեղավորների դարձի համար:
Գնացեք խաղաղությամբ, Իմ սիրելի հետևորդներ:
Իմ Սուրբ Հոգին ծածկում է ձեզ բոլորիդ այս ժամանակ, երբ Ես նշան եմ անում ձեզ այս հատուկ նվիրումի հանդեպ:
Ձեր սիրող Հիսուս

Ճիշտ ինչպես Ես մերժվեցի առաջին անգամ, Ես կմերժվեմ երկրորդ անգամ

Երկուշաբթի, 4 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:20

Իմ սիրելի աղջիկ, Իմ ընտրյալ ժողովրդից՝ հրեաներից, շատ քչերն ընդունեցին Ինձ որպես ճշմարիտ Մեսիա, երբ Ես եկա աշխարհ և մեռա մարդկության մեղքերի համար:
Այս անգամ շատ քիչ քրիստոնյաներ կհասկանան, որ այդ Ես եմ, որ խոսում եմ իրենց հետ հիմա, նախքան Ես կգամ երկրորդ անգամ:
Նրանք կհավատան այն ստերին, որոնք ծաղկում են խաբեբաների շրթունքներից՝ այն կեղծ մարգարեների, որոնց նրանք կսիրեն, մինչդեռ կմերժեն Ինձ մի այնպիսի ատելությամբ, որը հակառակ կողմում է Աստծո հանդեպ իրենց ունեցած սիրո համեմատ:
Ճիշտ ինչպես Ես մերժվեցի առաջին անգամ, Ես կմերժվեմ երկրորդ անգամ:
Դուք չպետք է տխրեք նրանից, թե ինչպես եմ Ես ծաղրվում, ոտքի, բռունցքի հարվածներ ստանում, իսկ Իմ պատգամները՝ ծաղրվում: Քանի որ այդպիսի ատելություն Իմ Սուրբ Խոսքի դեմ կարող է միայն գալ Սատանայից: Եթե Սատանայի կատաղությունն ուժեղանում է, ինչպես հիմա է, ապա կարող եք վստահ լինել, որ նա անհանգստանում է այն հոգիների համար, որոնց Ես պարտաստվում եմ խլել նրա ճիրաններից:
Փակեք ձեր ականջները: Նայեք ուղիղ ձեր առջև և կենտրոնացեք միայն Ինձ վրա:
Ձեզ վրա կթափվի ամեն տեսակի հարձակում, Իմ հետևորդներ, որպեսզի ձեզ կասեցնեն Ինձ հետևելուց:
Ամեն տեսակի պատճառաբանություն Իմ Խոսքի դեմ նրանց կողմից, ովքեր պարծենում են Սուրբ Հոգևոր հարցերում իրենց փորձագիտության վրա, պետք է մի կողմ նետվի:
Նրանք չունեն Սուրբ Հոգին իրենց հոգիների մեջ, քանի որ արժանի չեն հպարտության մեղքի պատճառով:
Ճիշտ ինչպես Ես տառապեցի խարազանումը այան վրա, Ես նույնպես նորից կտառապեմ մինչ Իմ Սուրբ Խոսքը հիմա բզկտվում է ատելությամբ նրանց կողմից, ովքեր ուզում են վստահանալ, որ Իմ Խոսքը կմերժվի:
Այս հոգիներին Ես հիմա ասում եմ. Եթե չեք ընդունելու Իմ Գթասրտության Ձեռքը՝ փրկելու համար մարդկությունը, ինչու՞ եք այդպիսի ատելություն պահում ձեր սրտերում:
Մի՞թե չգիտեք, որ գայթակղվում եք չարի կողմից, ով ցանկանում է կուրացնել ձեզ Ճշմարտության հանդեպ:

Ատելությունը, զրպարտությունն ու չարախոսությունն Ինձնից չեն գալիս: Երբ թույլ եք տալիս այդ նողկալի մեղքերը հաղթահարեն ձեզ, դուք Ինձ չեք սիրում:
Դուք ետ կգաք Ինձ մոտ երբ Ինձ մոտ կգաք Նախազգուշացման ընթացքում, եթե ունենաք անհրաժեշտ խոնարհությունը՝ խնդրելու Ինձ, որ ներեմ ձեզ:
Եթե դուք հիմա լուռ չմնաք, դուք կտառապեք, և ձեր զղջումը ձեզ թույլ և դողացող կդարձնի Իմ առջև:
Ինչպես եք դուք Ինձ վիրավորում:
Ինչպես եք դուք Ինձ ստիպում տառապել:
Դուք խարազանում եք Ինձ ճիշտ ինչպես Ինձ առաջին անգամ խարազանեցին:
Չնայած դրան, ասում եք, թե Իմ Սուրբ Աշակերտն եք:
Դուք մեծ վշտի պատճառ եք Ինձ համար:
Իմ հետևորդներին Ես ասում եմ. Անտեսեք այդ խայթոցները:
Մի բացեք ձեր բերանը նրանց մոտ, ովքեր ցույց են տալիս զայրույթ, ատելություն և ովքեր միևնույն ժամանակ հայտարարում են, թե սիրում են Ինձ:
Ինչպես կարող եք դուք Ինձ սիրել, երբ սեր կամ համբերություն չեք ցույց տալիս միմյանց հանդեպ:
Դուք կեղծավորներ եք, եթե մեկ ուրիշին խարազանում եք Իմ Անվամբ:
Հիմա ժամանակը մոտ է երկրորդ մերժման համար, տարբեր չէ առաջին անգամվանից:
Ծաղրը կնշանակի, որ այդ ինչքնակոչ Սուրբ առաքյալները կծաղրեմ Իմ մարգարեներին՝ փրձելով նրանց թակարդը գցել՝ հարցաքննելով Սուրբ Գրքերի նրանց ունեցած գիտելիքները:
Իմ մարգարեները չեն հասկանում Սուրբ Գրքերին, և նրանք չեն պաշտպանի Իմ խոսքը:
Չնայած դրան, այդ այսպես կոչված Սուրբ աշակերտները, ճիշտ ինչպես Իմ Գլխին Փշերի պսակը դնելիս էր, կփորձեն Իմ մարգարեներին ներկայացնել որպես հիմար և անարժան:
Հետո նրանք երկար ճանապարհ կգնան՝ նրանց անուններ տալով և ամոթանք տալով՝ միևնույն ժամանակ դավանելով, թե իրենք որքան գիտուն են Իմ Ուսուցումներին:
Ծաղր ու ծանակը կշարունակվի մինչև Նախազգուշացումը, երբ այդ հոգիները կհասկանան իրենց կատարած սխալը:
Նրանք կողբան և կտառապեն դրա պատճառով, սակայն Ես կներեմ նրանց, որովհետև Ես սիրում եմ նրանց:
Բայց այդ ժամանակ շատերը չեն ապաշխարի: Նրանք սարսափելի տառապանք և հալածանք կսկսեն Իմ վերջին ժամանակների մարգարեների հանդեպ: Նրանք ոչ մի պահ տեղի չեն տա:
Իմ՝ Հիսուս Քրիստոսի, Մարդու Որդու Անվամբ նրանց վրա կհեղվեն ամեն տեսակի վիրավորանքներ և հարձակումներ:
Նրանք կմերժեն Ինձ՝ այսօր իրենց տրվող Իմ Սուրբ Խոսքի միջոցով, մինչև վերջ:
Հետո նրանց մեկ անգամ ևս կտրվի՝ ընդունելու Ճշմարտության Գիրքը: Նրանք կամ կընդունեն Ինձ, կամ՝ կմերժեն:
Հետո Ես կհավաքեմ այն բոլոր խոնարհ հոգիներին, ովքեր սիրում են Ինձ, և Նոր Երկինքն ու Նոր Երկիրը կմիաձուլվեն:
Նրանք, ովքեր կշարունակեն մերժել Ինձ, կնետվեն Դժոխքի Կրակների մեջ:
Ես գալիս եմ մեկ վերջին անգամ փրկելու ձեզ:
Բացեք ձեր սրտերը և տեսեք, որ այդ Ես եմ՝ Հիսուսը, ով կանչում է ձեզ հիմա:

Եթե չեք կարողանում տեսնել սա, ապա շատ աղոթքի կարիք ունեք, որ հնարավոր դարձնեք Սուրբ Հոգու համար ճշմարիտ մտնել ձեր հոգիները:
Հիշեք, նրանք, ովքեր օրհնված են Սուրբ Հոգով, չեն վիրավորում ուրիշներին, չեն չարախոսում և Աստծո զավակների դեմ ատելություն չեն տարածում:
Նրանք չեն ցանկանում վերահսկել Աստծո զավակներին:
Նրանք չեն խախտում Տասը Պատվիրանները:

Սատանան մտադիր է թունավորել Իմ ընտրյալ հոգիներից մի քանիսի մտքերը այս Առաքելության հանդեպ

Երեքշաբթի, 5 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 10:00

Աղջիկս, խելամիտ չի լինի նրանց կողմից, ովքեր հետևում են Իմ տեսանողներին աշխարհով մեկ, որ տեղի տան չարի նոր պլանին:
Նա մտադիր է թունավորել Իմ ընտրյալ հոգիներից մի քանիսի մտքերը այս առաքելության հանդեպ:
Նա կշրջի նրանցից մեկին մյուսի դեմ:
Նա կասկածներ կառաջացնի նրանց մեջ այս Սուրբ Պատգամի դեմ, և դա քեզ շատ վիշտ ու ցավ կպատճառի:
Հոգևոր նախանձը կբարձրանա ինչպես գազան օվկիանոսի խորքից և ատելության մի սոսկալի հեղեղ կթափի ոչ միայն Իմ Պատգամների, այլև քեզ վրա:
Դու պետք է աղոթես, քանի որ դա տեղի կունենա շուտով:
Սպասեք այս իրադարձություններին ամենօրյա աղոթքի մեջ և թույլ մի տվեք որ գրոհների շարքը վհատեցնի ձեզ:
Իմ հետևորդները պետք է զգոն մնան սրա հանդեպ, քանի որ երբ դա սկսվի, հաջորդ ամսվա ընթացքում, դուք նույնպես կգայթակղվեք կասկածել Իմ Սուրբ Խոսքին:
Այս մարգարեությունը կծավալվի ձեր առջև, և կլինի մինչ այժմ այս առաքելության հանդեպ եղած ամենաթունավոր և վիրավորական հարձակումը:
Գրոհները ոչ միայն դուրս կգան նրանց կողմից, ովքեր տարածում են իրենց կարծիքով ժամանակակից ճշմարիտ տեսանողների պատգամները, այլև աջակցություն կգտնեն Իմ սրբազան սպասավորների որոշ մասի կողմից:
Այդ մաղձը կթունավորի շատ հոգիների, և շատերը կմերժեն Ինձ:
Անտեսիր այդ հարձակումները, աղջիկս: Առաջ շարժվիր և տուր աշխարհին Իմ պատգամները որքան կարող ես արագորեն:
Կարևոր է, որ տարածես Իմ Սուրբ Խոսքն ու Իմ աղոթքները նույնիսկ նրանց մեջ, ովքեր չեն ցանկանում լսել Ինձ: Քանի որ շատերը, երբ նրանց տրվեն այս պատգամները, զղջում կզգան դրա համար և նրանց կտրվեն շնորհները՝ տեսնելու համար ճշմարտությունը:
Երբեք մի անտեսեք Սատանայի ազդեցություն ձեզ վրա:
Նա թիրախ է դարձնում հատկապես այն հոգիներին, որոնց կարիքը Ես ունեմ որ օգնեն Ինձ փրկել մարդկությանը:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Զավակներս, երբ դուք տառապում եք այս կյանքում, ավելի եք մոտենում Իմ Որդուն

Չորեքշաբթի, 6 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 05:05

Զավակներս, երբ դուք տառապաում եք այս կյանքում, ավելի եք մոտենում Իմ Որդուն:
Տառապանքը, որքան էլ այն դժվարին է, բերում է շնորհներ հատկապես երբ այն ընդունում են կամովին՝ հոգիների փրկության համար:
Երբ տառապում եք, միշտ հիշեք, թե ինչպես տառապեց Իմ Որդին:
Նրա ֆիզիկական տանջանքը, հիշեք, չափազանց դժվարին կլիներ կրելու մարդու համար: Սակայն հոգեկան տառապանքը կարող է ստեղծել նույն ցավը:
Նրանք, ովքեր ընդդիմանում են տառապանքին, պետք է խնդրեն Ինձ՝ ձեր սիրող Փրկության Մորը, օգնել իրենց այն կրելու համար:
Ես կվերցնեմ ձեր տառապանքը և այն կառաջարկեմ Իմ Թանկագին Որդուն ձեր անունից՝ հոգիների փրկության համար:
Նա կվերցնի միայն այն, ինչ անհրաժեշտ է Իրեն, և ձեզ հանգստություն կտա: Հետո Նա կթեթևացնի ձեր բեռը:
Տառապանքը կարող է լինել հոգու մաքրագործման մի ձև:
Մերժեք այն, ընդդիմացեք նրան, և այն հանգստություն չի ապահովի: Այն կդառնա ավելի ծանր մի բեռ:
Երբ դուք այն առաջարկում եք սիրով, ձեր բեռը կթեթևացվի, և դուք ուրախ կդառնաք:
Երբեք մի վախեցեք տառապանքից, քանի որ այն ձեզ մոտեցնում է Իմ Որդու Սուրբ Սրտին:
Ձեր Սիրող Մայր
Մայր Փրկության

600,000 ընկած հրեշտակներ են արձակվել դժոխքի խորքերից անցած տարի: Հիմա արձակվել են ևս 5 միլիոն:

Հինգշաբթի, 7 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, ժամանակն է վերցնելու զենքերը Երկնային պատերազմում, որը նորից ծավալվում է Սատանայի և նրա ընկած հրեշտակների հետ:
Հիմա սանձազերծված լինելով ամեն ազգի մեջ՝ Սատանայի ընկած հրեշտակների բանակն ու երկրի վրա նրանց նվիրված աշակերտները ամեն ձևով թունավորում են Աստծո զավակներին:
Կան տեսանելի նշանները: Եկեղեցու ներսում եղած ճգնաժամը՝ Կաթոլիկ Եկեղեցու, ստեղծվել է չարի ուժերի միջոցով, որոնց թիվ մեկ նպատակը նրան ծնկի բերելն էր:
Չբավարարվելով սրանով, չարի ուժերը ցանկանում են ոչնչացնել Սուրբ Հաղորդությունը՝ այն պղծելու միջոցով:

Երկրի վրայի եկեղեցին բարոյազրկելու միջոցով Սատանայի պլանն էր ոչնչացնել Իմ հետևորդների հավատը:
Իմ հետևորդներից շատերն այլևս չեն պատվում Ինձ՝ իրենց Փրկչին, որովհետև նրանք մեղադրում են նրանց մեղքերը, ովքեր ներկայացնում են Ինձ Իմ Եկեղեցում: Որքան է դա Ինձ վիրավորում, երբ նրանք լքում են Ինձ այդքան արագորեն:
Հավատի ուրացությունն աշխարհում այսօր նույնպես պլանավորված էր Սատանայի կողմից՝ Աստծո զավակներին իրենց հավատը մերժելու մեջ գայթակղեցնելու միջոցով:
Դրա փոխարեն նա օգտագործում է մի նոր կրոն, որը հաճախ հայտնի է որպես Նոր Դարի կրոն: Աստծուն՝ Հավիտենական Հորը փառաբանելու փոխարեն նրանք փառաբանում են մարդկային արարածին որպես հոգևորապես գերագույն և ամեն ինչի հրամանատար:
Ինչպես Լյուցիֆերը, որը ոչ միայն ցանկանում էր լինել ինչպես Աստված, այլև ցանկանում էր դառնալ Աստված, արագորեն ընդլայնվող այս պաշտամունքը ցանկանում է համոզել Աստծո զավակներին, թե իրենք վերահսկում են իրենց սեփական ճակատագիրը:
Թե ամեն ինչ կարող է վերահսկվել մետաֆիզիկական աշխարհի /գոյության/ հավատի միջոցով, որը գոյություն չունի:
Հավատքը կեղծ աստվածների հանդեպ, ինչպես Բուդդան, վնասել է այնքան շատ մարդկանց և տարել նրանց մի խավար աշխարհ, որն առաջին տեսքից թվում է թե փայլում է, բայց որը չի կարողանում վառել մաքուր սեր միմյանց հանդեպ:
Այդ ամենի փոխարեն Նոր Դարի կրոնները բարձրանում են մեկ բանի. Մոլուցքը սեփական անձի հանդեպ և սեփական անձի հանդեպ սերը՝ մեկ ուրիշի հաշվին:
Պատերազմները, որոնք ստեղծում են Սատանայի մասոնական օրդերները /ուխտերը/ շատանում են, իսկ դրանց ամենամեծ խումբը կղեկավարի վերահսկողությունը Միջին Արևելքում զանգվածային սպանությունների միջոցով:
Եվրոպայում նրանք կղեկավարեն նոր համաշխարհային արժույթի ներմուծումը՝ նրանց ստրկացնելու համար:
Սատանայի ճանկն այնքան ուժեղ է բռնել, որ շատ աղոթք կպահանջվի գլխիվայր շրջելու համար նրա ուժը: Հետո կլինի գայթակղությունը՝ Աստծո զավակներին շրջել Ճշմարտությունից:
Նա՝ Սատանան, կարող է խառնաշփոթ ստեղծել ձեր մտքում: Բայց չնայած նրան, որ նա իշխանություն չունի իմանալու թե ինչ եք մտածում, նա կարող է մտքեր և կասկածներ դնել ձեր ուղեղի մեջ:
Երբ դուք առաջին հերթին դիմադրում եք՝ աղոթելով շնորհների համար, որպեսզի պաշտպանվեք, նա ավելացնում է իր գործունեությունը:
Սատանան ուղարկում է իր դև հրեշտակներին հավատացողների մոտ և տանջում է նրանց: Եթե կարողանայիք տեսնեք նրանց, շոկից կցնցվեիք: Երկուսը կամ երեքը կարող են շրջապատել ձեզ և ծուղակը գցել, ձեզ շփոթության մատնել, վիատեցնել և լցնել ձեր ուղեղը մեկ այլ անձի հանդեպ չար մտքերով:
Առաջին թիրախներն են այն ամենը, ինչը կապ ունի Աստծո, Նրա Եկեղեցիների, Նրա զավակների և նրանց հետ, ովքեր երկրի վրա ներկայացնում են Աստծուն:
Հետո նա թիրախ է դարձնում բարձր պաշտոններում գտնվողներին, ովքեր վերահսկում են միլիոնավոր մարդկանց կյանքը: Նա գայթակղեցնում է նրանց կոռուպցիայով, իշխանության բանեցմամբ և վատ օրենքների ներմուծմամբ, որոնք

նպատակ ունեն ցավ և դժբախտություններ առաջ բերելու: Իսկ հետո նա կազմակերպում է պատերազմ:
Զավակներս, մի անտեսեք մարտը, քանի որ այն իրական է:
600,000 ընկած հրեշտակներ են արձակվել անցած տարի դժոխքի խորքերից: Այժմ արդեն արձակվել են ևս 5 միլիոն: Երկնքում Աստծո բանակի ժամանակը՝ ոչնչացնելու Սատանային, սկսվել է: Երկրի վրա Իմ Բանակի ժամանակը՝ զենքերը հավաքելու՝ նույնպես սկսվել է:
Ժամանակը կարճ է: Մենք շատ աշխատանք ունենք անելու:
Զենքը աղոթքն է: Նպատակը դարձն է: Ես կարող եմ հասնել հոգիների փրկությանը միայն այն դեպքում, եթե Իմ Ձայնը լսվի այս անգամ:
Սատանան գիտի սա: Նա անեծք է դրել այս Առաքելության վրա և Աստծո զավակներից շատերին հեռու կքաշի: Սակայն նա չի կարող հաղթել: Քանի որ ոչ մեկը չի կարող կասեցնել Ճշմարտության Գրքի բացահայտումը, որովհետև այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, ով անում է դա:
Սակայն շատ խեղճ հոգիների կհամոզեն նայել հակառակ ուղղությամբ մինչ Ես կհայտարարեմ Ճշմարտությունը աշխարհին՝ տեսնելու համար ինչպես կանխասացվել է Հայտնության Գրքում:
Երբեք նրան թույլ մի տվեք /խոսել/ ձեզ հետ: Դուք դա կարող եք անել՝ մերժելով պատասխանել այն վիրավորանքներին ու ծաղրին, որոնք կհասցվեն այլոց կողմից երբ դուք հռչակեք Իմ Սուրբ Խոսքը: Քանի որ նրան պատասխանելով, դուք նրան կտաք այն զինանյութը, որի կարիքն ունի ձեզ ցած գցելու համար:
Ձեր սիրող Հիսուս
Փրկիչ ողջ մարդկության

Ազատ կամքը չի կարող վերցվել ձեզնից: Ես չեմ կարող պահանջել որ դուք հետևեք Ինձ

Ուրբաթ, 8 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 07:05

Իմ սիրելի աղջիկ, շատերը, կարդալով Իմ այս Սուրբ Խոսքերը, որոնք տրվում են աշխարհին սիրուց ելնելով, սխալ են հասկանում Իմ մտադրությունները:
Որպես Մարդու Որդի, Իմ ուխտը ողջ մարդկությանը փրկելն է:
Խաչի վրա Իմ Խաչելությունը պարզապես ժամանակի մեջ մի պահ չէր, ոչ էլ պատմության մեջ մի պահ:
Դա մի զոհաբերություն էր՝ ձեզանից յուրաքանչյուրին, նույնիսկ այսօր, Հավիտենական Կյանքի ընծան առաջարկելու համար:
Սա հանդիսավոր խոստում է: Գալիք աշխարհի կյանքը՝ երկրի վրա Իմ Թագավորությունը, բոլորի համար է:
Ես գալիս եմ հիմա նախապատրաստելու ձեզ:
Նախկինում Ես ասել եմ ձեզ, որ մինչ Ես գալիս եմ ձեզ նախազգուշացնելու Իմ Ուսուցումները մերժելու և Իմ Հավիտենական Հոր կողմից դրված Տասը Պատվիրանները մերժելու վտանգների մասին, Ես չեմ կարող հրամայել կամ պահանջել Աստծո զավակներից, որ լսեն: Քանի որ ողջ մարդկությանը, ինչպես նաև Երկնքի հրեշտակներին, տրվել է մի յուրահատուկ ընծա՝ ազատ կամքի ընծան:

Ազատ կամքը չի կարող վերցվել ձեզանից: Ես չեմ կարող պահանջել, որ դուք հետևեք Ինձ:
Ես կարող եմ նախազգուշացնել ձեզ, ցույց տալ ձեզ ձեր ուղիների սխալները, բայց Ես չեմ կարող պահանջել, որ պատասխանեք Իմ կանչին:
Ես կարող եմ միայն խնդրել:
Ազատ կամքը, չնայած ընծա է, կարող է նաև խոչընդոտ լինել, քանի որ այն կօգտագործվի Սատանայի կողմից ձեր մտքի մեջ կասկածներ դնելու համար:
Նա կարող է պահանջներ դնել շատ ուժեղ ձևով, որին ձեզ համար չափազանց դժվար կլինի դիմադրել, այսպիսին է նրա ուժը:
Իմ համբերությունը փորձության է ենթարկում այս վերջին ժամանակներում ինչպես երբեք:
Չնայած Խաչի վրա Իմ Մահվան, Իմ կյանքին, որը սիրով տրվեց ձեզանից յուրաքանչյուրին փրկելու համար, շատերը մոռացել են, թե իսկապես ինչ է նշանակում այդ Զոհաբերությունը:
Եթե Ես Իմ կյանքը տվեցի մարդկության փրկության համար, ինչու՞ Իմ զավակները չեն լսում:
Եթե նրանք չեն ցանկանում լսել Ինձ հիմա այս պատգամների միջոցով, դա իրենց ազատ կամքով կատարված ընտրությունն է: Ուրեմն ինչու՞ են նրանք շարունակում սխալ մեկնաբանել և շրջել Սուրբ Աստվածաշնչի բովանդակությունը:
Անկախ նրանից, թե որքան Ինձ կմերժեն, Ես երբեք չեմ լքի կատարելու Իմ պարտականությունը՝ նախազգուշացնելու ձեզ գալիք վտանգների մասին:
Վտանգները, որոնց մասին Ես խոսում եմ, միայն Սատանայի չար աշակերտների կողմից ձեր ազգերի վրա պլանավորած թշվառությունները չեն՝ ձեր փողի, սննդի կամ մարդկային կյանքի վրա վերահսկողությունը:
Ոչ, վտանգները, որոնց դուք պետք է տեղյակ լինեք, ամենից առաջ ձեր հոգին Սատանային ու նրա ընկած հրեշտակներին կորցնելն է:
Ուշ կդարձնեք Իմ Խոսքին հիմա, թե ոչ, դա արդեն ձեր գործն է:
Ես միայն խնդրում եմ, որ լսեք: Չլսելը և այն յուրահատուկ շնորհները չընդունելը, որոնք Ես հիմա հեղում եմ ձեզ վրա, կնշանակի, որ դուք համապատասխան ձևով պատրաստված չեք լինի՝ փրկելու համար ձեր հոգին գազանից:
Ես օրհնում եմ բոլորիդ: Նրանց, ովքեր շփոթված են, Ես կոչ եմ անում ընտրել այս պատգամների մեջ տրված աղոթքները:
Դրանք կօգնեն ձեզ պատասխանելու Երկնքից եկող Իմ Կանչին:
Ձեր Հիսուս

Հայր Աստված. Ես կպատերազմեմ Արմագեդդոնի պատերազմը Երկնքի հիերարխիայի հետ

Շաբաթ, 9 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ. 03:45

Իմ քաղցր աղջիկ, վստահիր, որ Ես՝ ձեր Երկնավոր Հայրը, կանեմ ամեն ինչ Իմ զորությամբ, որպեսզի փրկեմ երկրի վրա Իմ բոլոր զավակներին:
Մինչ Ես պետք է հարգեմ ազատ կամքի ընծան, որը հեղվել է Իմ կողմից որպես ամենամեծ ընծաներից մեկը՝ վստահանալու համար, որ մարդկությունը կսիրի Ինձ

իրենց սեփական համաձայնությամբ, այլ ոչ թե ուժով, Ես հրաշքներ կգործեմ և հրաշալիքներ կստեղծեմ Իմ զավակներին Ինձ մոտ տուն բերելու ահմար:
Քանի որ Ես Արդարության Աստված եմ, Ես երբեք չեմ կարող թողություն տալ կամ ընդունել չարիքը, բայց Ես կներեմ բոլոր նրանց, ովքեր ետ կշրջվեն դեպի Իմ Որդին և ազատագրում կփնտրեն, երբ իմանան Ճշմարտության Գրքի բովանդակությունը:
Ես կպատերազմեմ Արմագեդդոնի պատերազմը Երկնքի հիերարխիայի հետ և, խոստանում եմ, կհաղթեմ թշնամուն և Լուցիֆերի ձեռքով սերված չարքերին:
Ժամանակն ավելի է մոտենում որ Սատանան աքսորվի 1,000 տարի, և վայ այն մարդուն ով չի հրաժարվում նրանից կամ նրա չարությունից:
Բոլորին ցույց կտրվի Իմ Աստվածային Սիրո Ճշմարտությունը և Իմ ցանկությունը՝ կիսելու բոլորի հետ Իմ հոյակապ Թագավորությունը, Իմ Դրախտը:
Իմ մարգարեների կողմից ամեն ջանք կգործադրվի նրանց Իմ Որդու բազուկների մեջ բերելու համար:
Զավակներս, մի լքեք Ինձ՝ ձեր սիրող Հորը:
Եկեք, լսեք Իմ Կանչը:
Մի մերժեք ձեր ժառանգությունը:
Հիմա դուք կանգնած եք մարդկային ռասայի առջև երբևէ ծառացած ամենամեծ ճգնաժամի առջև, քանի որ եկել է ժամանակը, որպեսզի կատարեք վերջնական ընտրությունը:
Իմացեք, որ ամեն տեսակի սուտ, ամեն տեսակի գայթակղություն կարվի՝ Սատանայի և նրա դևերի բազուկների մեջ սփոփանք գտնելու համար, որպեսզի գողանան ձեր հոգիները:
Միայն նրանք, ովքեր ժամանակն անց են կացնում աղոթքի և խորհուրդների միջոցով իրենց Հավատքը պաշտպանելով, բավարար չափով ուժեղ կլինեն նրանց ուժին դիմակայելու համար:
Հիշեք, որ Սատանան չի կարող հաղթել, քանի որ նա չունի այդ զորությունը: Հիմա նա կհարձակվի բոլորի վրա, նույնիսկ սուրբ հոգիների վրա, մերժելու համար Ինձ և Իմ սիրելի Որդուն:
Նա ձեզ կներքաշի խավարի ու շփոթության մի անդունդի մեջ, և դուք կբռնվեք խաբեության խորամանկ սարդոստայնի մեջ, որից չեք կարողանա ազատվել:
Լսեք Ինձ հիմա: Վերջնական մարտը սկսվել է: Մի կատարեք Երկնքից տրվող այս կանչը մերժելու սխալը, քանի որ դա կնշանակի որ դուք հավիտյան կկորչեք:
Օ, եթե տեսնեիք այն հոգիների ողբերգությունը, ովքեր կմերժեն Փրկության Գավաթը:
Նրանք անօգնական կերպով կգլորվեն Սատանայի հետ միասին դժոխքի խորքերը, որտեղից վերադարձ չկա:
Ես, որպես ձեր Հայր, պետք է ձեզ մատնացույց անեմ ձեր հանդիման գտնվող վտանգները:
Ինչու՞ չեք ցանկանում լսել:
Եթե հավատում եք Ինձ, ուրեմն իմացեք, որ Ես կուղարկեի Իմ մարգարեներին ձեզ զգուշացնելու համար:
Մի՞թե Ես դա չեմ արել նախկինում: Արդյո՞ք նրանք լսեցին: Ոչ, շատերը չլսեցին, իսկ հետո մարգարեությունը ծավալվեց նրանց չհավատացող աչքերի առջև:
Այս անգամ Ես գալիս եմ հայտարարելու, որ Իմ Որդու՝ Ճշմարիտ Մեսիայի, գալու ժամանակը մոտ է:
Սատանան գիտի սա: Իմ հանդեպ նրա ատելությունն այնքան ուժեղ է, որ նա ամեն ինչ կանի Ինձնից Իմ զավակներին խլելու համար:

Ես ձեր Աստվածն եմ՝ սկիզբը և վախճանը:
Ես ստեղծեցի աշխարհը սկզբում, և Իմ ձեռքով է որ այս աշխարհը, ինչպիսին դուք ճանաչում եք այն, կվերջանա:
Բայց Իմ սիրելի զավակների համար, ովքեր մերժում են Սատանային, նոր աշխարհը՝ երկրի վրա Նոր Դրախտը, սպասում է ձեզ իր ողջ փառքով:
Մի շրջեք ձեր մեջքը:
Թույլ մի տվեք որ խեղաթյուրված մարդկային մտածողությունն արգելի ձեզ և ձեր սիրելիներին ներս մտնել այդ հոյակապ Դրախտը, ուր դուք ոչ մի բանի կարիք չեք ունենա:
Ընտրեք սիրո, ուրախության և գեղեցկության Իմ Դրախտը՝ մի հատուկ տեղ, ուր դուք կապրեք մտքի, մարմնի և ոգու կատարյալ ներդաշնակության մեջ:
Ոչ մի քայքայում: Ոչ մի մեղք: Միայն սեր, որտեղ դուք կապրեք Իմ Աստվածային Կամքի հետ միության մեջ:
Ձեր սիրող Երկնավոր Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Կեղծ Մարգարեն ոչ միայն կստանձնի Կաթոլիկ Եկեղեցին, նա կթելադրի բոլոր Քրիստոնեական Եկեղեցիներին

Կիրակի, 10 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ. 03:30

Իմ սիրելի աղջիկ, Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին խիզախություն ցուցաբերել այս անգամ:
Սա վայր ընկնելու և ողբալու ժամանակը չէ: Սա ձեր փրկության համար մարտնչելու ժամանակն է:
Ես կոչ եմ անում բոլոր Քրիստոնեական Եկեղեցիներին, Իմ հոգևորականներին և բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը նվիրել են Ինձ՝ իրենց Հիսուսին, որ լսեք Իմ աղերսները:
Երբեք չլքեք Իմ ուսուցումների ճշմարտությունը:
Երբեք չլքեք Ինձ:
Երբեք չլքեք Իմ Եկեղեցին: Քանի որ Ես Եկեղեցին եմ:
Երբեք չլքեք Իմ Մարմինը, քանի որ Ես կյանքի Հացն եմ:
Երբեք չընդունեք այն ստերը, որոնք շուտով կներմուծվեն ձեր մեջ՝ փոխարինելու համար երկրի վրա Իմ եկեղեցուն:
Նախապատրաստվելու ժամանակն է:
Շուտով ձեզ կստիպեն կուլ տալ մի նոր կրոն, որը կլինի մարդու /կողմից/ պատրաստված:
Շուտով ձեզ կստիպեն սնվել նրանով, ինչը կթվա որպես Սուրբ Հաղորդություն, բայց դա Իմ Մարմինը չի լինի:
Այն կդառնա դատարկ, անպտուղ և իսկական կյանք չի տա:
Միակ Սուրբ Հաղորդությունը, որ գոյություն ունի, այն ձևն է ուր Իմ Ներկայությունը հայտնի է դարձվում Պատարագի Սուրբ Զոհաբերության մեջ, ինչպես հիմա է:

Երբեք չշեղվեք սրանից, նույնիսկ եթե ձեզ ստիպեն այդպես անել այն հեթանոսները, որոնք կստանձնեն Իմ Քրիստոնեական Եկեղեցիները:
Նրանք կպոծեն Իմ Եկեղեցիները և դրանք կդարձնեն ոչ ավելի քան ժամանցի և սոցիալական լրատվության վայրեր:
Դուք պետք է միշտ հետևեք այն քայլերին, որոնք Ես սովորեցրի Իմ Առաքյալներին Վերջին Ընթրիքի ժամանակ:
Հիմա դուք պետք է վստահանաք, որ ամեն ինչ տեղում է, նախքան հարձակումը կսկսվի:
Քանի որ շուտով ձեզ համար անհնար կլինի հետևել մի կեղծ վարդապետության, որը կպարտադրվի ձեզ այն պղծության կողմից, որն առջևում է:
Կեղծ Մարգարեն ոչ միայն կստանձնի Կաթոլիկ Եկեղեցին, նա կթելադրի բոլոր Քրիստոնեական Եկեղեցիներին, որոնք կմիաձուլի որպես մեկ:
Բայց Ինձ վրա՝ Հիսուս Քրիստոսի վրա չէ, որ կկառուցվի Նոր Տաճարը: Դա կլինի մի տաճար, որը փոխարինելու է Մայր Աթոռին /Հռոմին/, որպեսզի պատվի գազանին:
Ուշ դարձրեք հիմա Իմ խոսքերին, քանի որ շուտով կտեսնեք Ճշմարտությունը:
Նրանք, ովքեր բավականին քաջ են դիմակայելու համար ձեր հավատի հանդեպ այդ հալածանքին, դուք պետք է պլանավորեք հիմա:
Նրանք, ովքեր չունեն ուժը՝ կռվելու հակաքրիստոսի և կեղծ մարգարեի թագավորության դեմ, ծնկի եկեք և աղերսեք Ինձ՝ օգնել ձեզ:
Ես ուղղություն կտամ ձեզ Իմ նոր առաջնորդների միջոցով, ովքեր դուրս կգան ձեր մեջ՝ առաջնորդված Իմ Երկու Վկաների կողմից:
Ենովքն ու Եղիան՝ ներկա երկրի վրա Իմ Քրիստոնեական Եկեղեցիներում և Իսրայելի Տանը, շուտով կազդեն Կտակարանի քարոզչության վրա ողջ աշխարհով մեկ:
Ոչինչ չի կասեցնի Ճշմարտության ուսուցմանը:
Այս ժամանակը դժվար կլինի, բայց բարձրացեք և հետևեք երկրի վրայի Իմ Բանակին, և ավելի շատ հոգիներ կփրկվեն:: Չլքեք այն հոտը, որը Ես տվել եմ ձեզ՝ առաջնորդելու համար:
Չվախենաք, քանի որ միայն դեպի Հավիտենական Կյանք տանող Իմ Ճանաօարհին հետևելու միջոցով կարող եք փրկվել:
Հետևեք Կեղծ Մարգարեի ճանապարհին, և դուք ոչ միայն կորած կլինեք Ինձ համար, այլև կառաջնորդեք անմեղ հոգիների Դժոխքի ճանապարհով:
Քաջ եղեք, Իմ սրբազան սպասավորներ:
Ընդունեք, որ Իմ վերադարձի ժամանակը մոտալուտ է: Դուք ժամանակ չունեք կորցնելու:
Ձեր Հիսուս

Մայր Փրկության. Աղոթեք Քրիստոնյա Եկեղեցիների համար, որպեսզի նրանց տրվի շնորհները՝ պաշտպանվելու համար

Երկուշաբթի, 11 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ.12:02

Աստծո բոլոր զավակները կանչվում են աշխարհով մեկ միասին հավաքվելու որպես մեկ՝ Իմ հավիտենական Հոր Գթասրտությունն աղերսելու համար այս ժամանակ:

Զավակներս, դուրս հեղեք ձեր սրտերն Իմ Հոր առջև և խնդրեք Նրան, որ պաշտպանի ձեզ և ծածկի ձեզ Իր Որդու Թանկագին արյունով:
Դուք պետք է այժմվանից ուշադիր լինեք ամեն օր աղոթելու Հայր Աստծուն Հիսուս Քրիստոսի՝ աշխարհի Փրկչի անունով՝ ամեն տեսակի պաշտպանության համար այն չար ուժերից, որոնք հիմա ամենուր են:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք երկրի վրա Քրիստոնեական եկեղեցիների համար, որպեսզի նրանց տրվի շնորհները՝ պաշտպանելու համար իրենց Հավատքը:
Երբեք չհուսահատվեք, զավակներս, քանի որ երբ ձեր հավատարմության երաշխիքը տաք Իմ Որդու հանդեպ և աղոթեք զորության համար, ձեր աղոթքներին պատասխան կտրվի:
Այսօր Ես խնդրում եմ, որ շարունակեք /ասել/ **Դարձի Խաչակրաց արշավանքի աղոթքներնը** և **Ամենասուրբ Վարդարանի ու Աստվածային Գթասրտության աղոթքները:**
Այս ամիսը նշանակված է լինելու շատ ազգերի համար դարձի ամիս:
Պահեցողությունը պետք է շարունակվի հոգիներ փրկելու համար, և դա կարող եք անել ամեն մեկդ ձեր միջոցներին համապատասխան:
Շարունակեք, զավակներս, աղոթել դարձի համար, որի կարիքն այնքան կա այս ժամանակ:
Շնորհակալ եմ, որ պատասխանեցիք կանչիս:
Մայր Փրկության

Հիշեք, սա մի պատերազմ է, որը կհաղթի երկրի վրա գտնվող Իմ Մնացորդ Եկեղեցին

Երկուշաբթի, 11 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:30

Իմ սիրելի աղջիկ, շատ շուտով այս պատգամների պատճառով Սուրբ Հոգու զորությամբ բոցավառված հոգիները բոլոր ազգերի մեջ կհավաքվեն որպես մեկ: Նրանք կմիանան միասնությամբ հռչակելու համար Իմ Անունը, որպեսզի յուրաքանչյուր կորած հոգու հնարավոր լինի հանել գազանի ճանկերից:
Իմ Մնացորդ Եկեղեցին կհավաքվի արագորեն և կաճի աշխարհով մեկ, իսկ աղոթքը կկապի նրանց միասին որպես մեկ Սուրբ Եկեղեցի:
Ես օգնություն կուղարկեմ Իմ երկու Եկեղեցիներից յուրաքանչյուրին՝ երկրի վրա Իմ Երկու Վկաներին: Հետո նրանք կբարձրանան և քաջությամբ կհռչակեն Ճշմարտությունը աշխարհի յուրաքանչյուր անկյունում:
Իմ Ձայնը կլսվի ինչպես որոտ, և նրանք, ովքեր ճշմարիտ սիրում են Ինձ, չեն սխալվի և կճանաչեն Ինձ:
Սուրբ Հոգու շնորհները կվառեն Իմ զինվորների հոգիները, և նրանք առաջ կգնան և կօգնեն Ինձ փրկել մարդկությանը:
Ուրախացեք, Իմ Բանակ, քանի որ օրհնյալ եք, որ ընտրվել եք այս փառապանծ առաջադրանքի համար;
Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ ձեր ուեցած սիրո միջոցով, դուք կօգնեք փրկելու ձեր խեղճ եղբայրներին և քույրերին չարին կորցնելուց:

Եկեք հիմա, Իմ հետևորդներ, և թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ խիտ և փշոտ ջունգլիի միջով դեպի երկրի վրա Իմ Նոր Թագավորության լույսը:
Երբեք չվախենաք Իմ ձեռքից, քանի որ Ես հիմա ձեզ անվախորեն առաջնորդում եմ դեպի հակաքրիստոսի դեմ պատերազմը:
Հիշեք, սա մի պատերազմ է, որը կհաղթի երկրի վրա /գտնվող/ Իմ Մնացորդ Եկեղեցին:
Հիշեք նաև, որ հոգիների թիվը, որոնք կարող են փրկվել, կախված կլինի ձեր Հավատքի զորությունից, ձեր հոգու առատաձեռնությունից և Իմ Սուրբ Անվամբ տառապելու ձեր պատրաստակամությունից:
Ես սիրում եմ ձեզ:
Ես օրհնում եմ ձեզ:
Ես տալիս եմ ձեզ այն շնորհները, որոնց կարիքն ունեք հիմա, որ վերցնեք ձեր զենքը և քայլեք դեպի Հավիտենական Կյանք:
Ձեր սիրող Հիսուս

Ճշմարիտ մարգարեի թեստը մարդկության համար նրան տրվող աղոթքների մեջ է

Երեքշաբթի, 12 հունիսի, 2012թ, երեկոյան ժ. 05:58

Իմ սիրելի աղջիկ, իմացիր, որ **Ես երբեք չեմ արհամարհի նրանց, ովքեր ասում են, թե գալիս են Իմ Անվամբ, բայց այդպես չէ:**
Ես սիրում եմ Աստծո բոլոր զավակներին, ներառյալ այն կեղծ մարգարեներին, ովքեր ուղարկված են մարդկությանը խառնաշփոթի մեջ գցելու համար այս ժամանակ:
Այդպիսի հոգիներից շատերն են Իմ հանդեպ սիրով լի և կարիք ունեն ավելի մոտենալու: Նրանք կարող են, ոչ իրենց մեղքով, երևակայել, թե ստանում են աստվածային պատգամներ: Դուք պետք է աղոթեք այդպիսի հոգիների համար: Դուք երբեք չպետք է դատեք նրանց:
Հետո կան այնպիսիները, ովքեր ասում են, թե գալիս են Իմ Անվամբ, սակայն կրում են գազանի նշանը:
Գայլեր՝ ոչխարի մորթով: Նրանք սկսում են ծուղակը գցել մաքուր հոգիներին և աղտոտել նրանց խաբեության մեղքով:
Սրանք այն վտանգավոր կեղծ մարգարեներն են, որոնց նպատակը Իմ Ուսուցումների ճշմարտությունը շրջելն է մի այնպիսի ձևով, որ դրանք նկատելի չլինեն:
Նրանք, կեղծ խոնարհության արտաքին ֆասադի միջոցով, կստիպեն ձեզ հավատալ ստի Իմ Անվամբ: Նրանք կներկայացնեն խաբության թողտվության դիմակ, և ձեզ կհամոզեն, թե տարածում են Ճշմարտությունը:
Ճշմարիտ մարգարեի թեստը մարդկության համար նրան տրվող աղոթքների մեջ է:
Դարձն արագորեն տարածվում է Սուրբ Հոգու զորությամբ, երբ պատգամները գալիս են Երկնքից, և նրանք երբեք չեն ընդգրկում բոլոր կրոնները, բոլոր հավատամքները՝ որպես մեկ դրանք միավորելու համար:
Ես աղոթքի կոչ եմ անում այս ժամանակ այնպիսի հոգիների համար, ովքեր խաբվել են հավատալով, թե իրենք խոսում են Երկնքից եկող ձայնով: Աղոթեք նրանց, համար

որպեսզի նրանց տրվի զորությունը՝ փրնտրելու խոնարհություն, որ իրենց թույլ տրվի տեսնել Ճշմարտությունը:
Աղոթեք, որ նրանք թույլ չտան խաբեբային օգտագործելու իրենց հոգիները՝ խառնաշփոթություն զցելով Աստծո զավակների մեջ:
Աղոթեք նաև նրանց համար, ովքեր չեն խոսում Աստծո անունից, բայց գիտակցաբար խոսում են Սատանայի լեզվով: Նրանք նույնպես ձեր աղոթքների կարիքն ունեն, քանի որ անխնա կերպով օգտագործվում են Սատանայի կողմից՝ ստեր տարածելու համար:

Ձեր սիրող Հիսուս

Նվիրվածության ուխտը Հայր Աստծո Աստվածային Կամքին

Չորեքշաբթի, 13 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, ճիշտ ինչպես Իմ Հավիտենական Հայրը կտակեց **Իր Կնիքի Մեծ Ընծան մարդկությանը,** նույն կերպ **պետք է Նրա զավակները /տան/ իրենց նվիրվածության ուխտը Նրա Աստվածային Կամքին:**
Ես խնդրում եմ Աստծո բոլոր զավակներին, ովքեր կքայլեն Նրա բանակում օգնելու համար փրկել Աստծո զավակների՝ ներառյալ կարծրացած մեղավորների հոգիները, որ տան այս ուխտի խոստումը.
Խաչակրաց արշավանքի աղոթք (59) Նվիրվածության ուխտ Աստվածային Կամքին
Ով Ամենաբարձրյալ Աստված
Ով Երկնավոր Հայր
Ես տալիս եմ Քեզ իմ նվիրվածության հաստատուն ուխտը՝ պատվելու
և հնազանդվելու Քեզ ամեն ինչում՝ միացած երկրի վրա Քո Աստվածային Կամքին

Ես, Քո միակ սիրելի Որդու՝ Ճշմարիտ Մեսիայի Սուրբ Արյան միջոցով,
Առաջարկում եմ Քեզ իմ միտքը, իմ մարմինը, իմ հոգին՝ բոլոր հոգիների անունից,
որպեսզի Քո Աստվածային Կամքը կատարվի երկրի վրա ինչպես որ Երկնքում է:
Ամեն:

Դուք պետք է ուխտեք ձեր հոգիները Իմ Երկնավոր Հորը որպես ձեր հավատի նշան և որպես հիշատակ Խաչի վրա Իմ Մահվան, որպեսզի ձեզանից յուրաքանչյուրը խմի Փրկության Գավաթից:
Ձեր Հիսուս

Չնայած Նախազգուշացումից պետք չէ վախենալ, այն ցավ կառաջացնի նրանց մոտ, ովքեր շնորհի վիճակի մեջ չեն

Հինգշաբթի, 14 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 06:15

Ես՝ ձեր սիրող Հիսուսը, ցանկանում եմ, աղջիկս, որ խնդրես Իմ բոլոր հետևորդներին՝ ուշ դարձնել Իմ Հրահանգներին:
Նայեք ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամին, ձեր մեջ գտնվողներին, ովքեր չեն հետևում Իմ Ուսուցումներին:
Փնտրեք ձեր մեջ գտնվող այն հոգիներին, ովքեր կորած են Ինձ համար, ովքեր արտաքնապես մերժում են Ինձ: Հետո Ես խնդրում եմ, որ սրտանց աղոթեք նրանց համար այս ժամանակ:
Դուք պետք է Գթասրտություն խնդրեք նրանց հոգիների համար; Ձեր աղոթքներն ու զոհաբերությունները կարող են փրկել նրանց սարսափելի տառապանքից Նախազգուշացման ժամանակ մաքրագործման ընթացքում:
Չնայած Նախազգուշացումից պետք չէ վախենալ, և այն պտք է ողջունել որպես Իմ յուրահատուկ Ընծա, այն ցավ կառաջացնի նրանց մոտ, ովքեր շնորհի վիճակում չեն:
Նախօրոք նախապատրաստեք ձեր հոգիները, քանի որ առողջ հոգիների համարՆախազգուշացումը կլինի մի Ուրախալի Իրադարձություն:
Նրանք չեն տառապի, որովհետև կլինեն շնորհի վիճակի մեջ, հատկապես եթե ստանում են Խոստովանության Խորհուրդը կանոնավոր կերպով:
Նրանց զորությունը կօգնի նրանց, ովքեր Նախազգուշացումից հետո պետք է անցնեն Քավարանի ցավի միջով:
Օգնեք նրանց, ովքեր չեն լսում, Իմ Աստվածային Գթասրտության աղոթքն ամեն օր ասելով:
Առաջարկեք զոհաբերություն Ինձ՝ ձեր Հիսուսին, ձեր ընտանիքների մեղքերի քավության համար:
Ես Գթասրտություն ցույց կտամ բոլորին, ովքեր կընդունեն իրենց հոգիների սև վիճակը, երբ Նախազգուշացման ընթացքում նրանց ցույց տրվի իրենց մեղքերը:
Միայն նրանց, ովքեր ճշմարիտ խոնարհություն և մաքուր սիրտ ունեն, ներում կտրվի:
Նրանք, ներառյալ այն երեխաները, ովքեր լքել են Ինձ, հուսահատ ձեր աղոթքների կարիքն ունեն:
Ահա այն աղոթքը, որը դուք պետք է ասեք, որպեսզի նրանք դարձի գան Նախազգուշացման ընթացքում:
Խաչակրաց արշավանքի աղոթք (60) Աղոթք՝ Նախազգուշացման ընթացքում ընտանիքների դարձի գալու համար

Ո՜հ, սիրելի քաղցր Հիսուս
Ես Գթասրտություն եմ խնդրում իմ ընտանիքի հոգիների համար
/նշեք անունները/
Ես առաջարկում եմ Քեզ իմ տառապանքները, իմ փորձություններն ու աղոթքները՝
Փրկելու համար նրանց հոգիները խավարի ոգուց
Թող Քո այս զավակներից ոչ մեկը չմերժի Քեզ ոչ էլ Գթասրտության Քո Ձեռքը

Բաց նրանց սրտերը որ միահյուսվեն Քո Սուրբ Սրտին
Որպեսզի կարողանան փնտրել ներումը, որն անհրաժեշտ է նրանց փրկելու համար Դժոխքի կրակներից
Տուր նրանց հնարավորությունը՝ հատուցումներ կատարելու
Որպեսզի կարողանան դարձի գալ Քո Աստվածային Գթասրության Ճառագայթների հետ:

Ամեն:

Աստծո զավակներ, ամեն օր նախապատրաստվեք Նախազգուշացման համար, ասես թե այն կարող է պատահել ցանկացած ժամանակ:

Ձեր Հիսուս

Երկինքը ետ կոլորվի, ասես տանիք է բացվել

Շաբաթ, 16 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 07:40

Իմ սիրելի աղջիկ, Իմ Խոսքը լսվում է միլիոնավորների կողմից աշխարհով մեկ, մինչ Ես նախապատրաստում եմ Աստծո բոլոր զավակներին Իմ Աստվածային Գթասրտության համար:
Կան Սուրբ Հոգով օրհնյալներ, ովքեր Իմ Պատգամները կարդալու ժամանակ անմիջապես կիմանան, որ դրանք գալիս են Իմ Աստվածային Շուրթերից:
Նրանք, ովքեր ասում են, թե ճանաչում են Ինձ, սակայն դեռևս չեն կարողանում հասկանալ Ինձ, չեն կարողանա դիմադրել՝ չկարդալու Իմ Խոսքը, չնայած նրանք մարտնչում են Իմ դեմ:
Նրանք մերժում են Ինձ, սակայն նրանց շարունակում են ձգել Իմ Պատգամները:
Մի՞թե նրանք չեն հասկանում, որ այդ Սուրբ Հոգին է, որը, չնայած քնած է իրենց հոգիներում, որ տանում է նրանց դեպի Ինձ:
Ես նրանց կասեմ հետևյալը. Ժամանակը եկել է, քանի որ շուտով ձեր վիրավորանքները ցույց կտրվեն ձեզ Նախազգուշացման ընթացքում:
Իմ Խոսքի հանդեպ ձեր ատելությունը կբացահայտվի ձեզ, և այդ ժամանակ դուք կիմանաք Ճշմարտությունը:
Երբ դա տեղի ունենա, ապա դուք պետք է միանաք ձեր եղբայրներին և քույրերին՝ երկրի վրա Իմ Եկեղեցին պաշտպանելու համար պայքարում:
Երկինքը ետ կոլորվի, ասես թե տանիք է բացվել՝ բացահայտելու համար Իմ Աստվածային Գթասրտության կրակներն ու բոցերը:
Երկիրը կցնցվի այնպիսի ուժով, որ ոչ մի մարդ չի խուսափի Իմ Աչքերից, Իմ Հոգուց կամ Իմ Ընծայից:
Շատերը կդողան վախից, որորվհետև միայն այդ ժամանակ է, որ **շատերը կգիտակցեն առաջին անգամ, որ հոգի ունեն:**
Նրանք կիմանան, որ իրենց մարմինների հանդեպ իրենց սերը, ամեն զգայականը, որն իրենք փնտրում են սնելու համար, անիմաստ է:
Նրանց կտեսնեն իրենց հոգու յուրաքանչյուր մասը, բայց դա իրենց աչքերով չէ, ոչ կտեսնեն: Նրանք կնայեն իրենց հոգիներին Իմ Աչքերով:
Նրանք ցավ և նողկանք կզգան ինչպես Ես եմ զգում, երբ տեսնում եմ իրենց չար արարքների այլանդակությունը:
Նրանք կտեսնեն, թե որքան փտած է եղել իրենց վերաբերմունքն ուրիշների հանդեպ և այն չարիքը, որը արել են իրենց ընկեր մարդ արարածների հանդեպ, իրենց եղբայրների և քույրերի հանդեպ:
Հետո նրանք կտեսնեն իրենց անձի հանդեպ իրենց սերը, սնափառությունն ու կեղծ կուռքերի հանդեպ սերը, և կիմանան, թե որքան է դա վիրավորում Ինձ:

Նրանք, ում մեղքերն այնքան սև են, նրանք վատ կզգան, ցավ, և չեն կարողանա դիմանալ այն սարսափին, ինչ ստիպված կլինեն տեսնել: Նրանք կարիք ունեն ամեն զորության՝ դիմանալու համար այն մաքրագործմանը, որն անհրաժեշտ է, որպեսզի կարողանան կենդանի մնալ և հետևել Ճշմարտության ճանապարհին:
Կարևոր է հասկանալ, որ Նախազգուշացումը հենց այդ է: Ես գալիս եմ նախազգուշացնելու Աստծո զավակներին, որ իրենց մեղքերը կարող են և կներվեն:
Ես գալիս եմ նրանց ցույց տալու, թե ինչի նման կլինի Դատաստանի Օրը: Դա նշանակում է, որ նրանք, ովքեր այս էտապում ազատագրում կխնդրեն /մեղքերից/, կփրկվեն:
Նրանք, ովքեր դևռևս կմերժեն Ինձ, նրանց ժամանակ կտրվի ապաշխարելու համար, բայց ոչ շատ: Եթե նրանք շարունակել հակառակվել Իմ Գթասրտության Ձեռքին, ապա Ես ետ կքաշվեմ:
Հետո Ես կբաժանեմ արդարներին մի կողմում, և անարդարներին՝ մյուս: Եվս մեկ հնարավորություն այդ ժամանակ՝ ազատագրում փնտրելու համար, և նրանք, ովքեր կմերժեն Իմ Սիրո և Գթասրտության Ձեռքը, կնետվեն Դժոխք:
Այս մարգարեությունը կասնխասացվել է ամենասկզբից ի վեր:
Ուշ դարձրեք Նախազգուշացմանը և փրկեք ձեր հոգիները, քանի դեռ կարող եք:

Ձեր Հիսուս

Նրանց չար պլանները ներառում են նաև մի նոր գլոբալ վակցինացիա, որը հիվանդություն կառաջացնի աշխարհով մեկ

Կիրակի, 17 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 08:15

Իմ սիրելի աղջիկ, մասոնական խմբերի պլանները՝ գրավելու աշխարհի արժույթները, մոտենում են ավարտին:
Նրանց չար պլանները ներառնում են նաև **մի նոր գլոբալ վակցինացիա,** որը հիվանդություն կառաջացնի աշխարհով մեկ՝ մի այնպիսի մասշտաբով տառապանք առաջացնելու համար, որը երբևէ չի տեսնվել:
Խուսափեք այդպիսի հանկարծակի հայտարարված գլոբալ վակցինացիայից, քանի որ այն կսպանի ձեզ:
Նրանց չար սխեմաները շոկի մեջ կգցեին բոլոր անմեղ հոգիներին, ովքեր գաղափար չունեն, թե նրանք որքան հզոր են:
Առաջնորդված ուժի, հարստության մոլուցքով և իրենց արած ամեն բանում Աստծուն նման լինելու ցանկությամբ, նրանք հավատացած են, թե անպարտելի են:
Նրանք վերահսկում են բանկերը, կառավարություններին և պատասխանատու են Միջին Արևելքում տեռոր առաջացնելու համար:
Նրանք վերահսկում են աշխարհի լրատվամիջոցների մեծ մասը, և նրանց չարության ճշմարտությունը թաքնված է այսպես կոչված մարդասիրական կազմակերպությունների ետևում:
Տխուր է, բայց Աստծո զավակներից շատ քչերը գիտեն նրանց չար պլանների մասին:

Իմացեք, որ Իմ Հոր ձեռքը կիջնի այնքան հանկարծակի և արագորեն այն ազգերի վրա, ովքեր պաշտպանում են այդպիսի չար առաջնորդների:
Նրանց կհարվածեն այնպիսի ուժգնության ցունամիներ ու երկրաշարժեր, որ կքշեն կտանեն նրանց:
Նրանք, ովքեր հավատացած են, թե այնքան հզոր են, **կտեսնեն երկնքից ընկնող կրակ հենց Իմ Երկրորդ Գալուստից առաջ:**
Ծովերը կդառնան կրակի լճեր, և նրանց համար դժվար կլինի թաքնվել պատժի ձեռքից, որը կթափվի այն չար հոգիների վրա, ովքեր կմերժեն Իմ Գավաթը:
Հանդուգն մինչև վերջ, նրանք կկռվեն Իմ Հավիտենական Հոր և Երկնքի զորության դեմ:
Կանգնելով հակաքրիստոսի կողքին, այն խմբերից, որոնցից նա զարգանում է, **նրանք կհասկանան իրենց ուղիների սխալը, երբ չափազանց ուշ կլինի իրենց համար:**
Այդ խմբերից շատերը, ներառյալ բանկերի, կառավարությունների առաջնորդները, միմյանց հետ փոխկապակցված մեծ բիզնեսի ղեկավարները, որոնք **միասին աշխատում են՝ մուրացկան դարձնելու համար հասարակ մարդկանց,** դարձի կգան Նախազգուշացումից հետո: Ուստի այդ լավ է:
Ժամանակը, որ Ես առանձնացնեմ Ինձ սիրող հոգիներին նրանցից, ովքեր կանգնած են չարի կողքին, հեռու չէ:
Զգուշացեք: Միայն այնքան ժամանակ կլինի, որպեսզի դարձի գաք: Իմ Գթասրտության կարիքն ամենաշատն ունեցող հոգիներիը պատկանում են այդ չար խմբերին, ովքեր հարգանք չունեն Աստծո օրենքների հանդեպ:
Դուք պետք է աղոթեք, որ նրանք տեսնեն Ճշմարտությունը:
Դուք պետք է աղոթեք, որ նրանք դադարեցնեն դժվարություններ պարտադրելը այն օրենքների միջոցով, որոնք մտադիր են ստեղծել:
Դուք պետք է աղոթեք, որ կասեցվի այն գենոցիդը, որը նրանք պլանավորում են, որն ավելի վատ է, քան այն, ինչ Հիտլերն արեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:
Այս խումբը, որն ամենամեծն է իր թվով միջին դարերում կազմավորվելուց ի վեր, Սատանայի բանակն է: Նրանց կառաջնորդի հակաքրիստոսը: Տասնամյակներ ի վեր նրանք պլանավորել են բանկերը դնել իրենց վերահսկողության տակ:
Նրանք պլանավորել են **Գազանի Նշանի** ներմուծումը, **մի չիպ՝ որը կստիպեն ընդունել յուրաքանչյուր տղամարդու և կնոջ** իրենց մարմինների մեջ, որպեսզի կարողանան սնունդ ունենալ, տասնհինգ տարի:* (Սա վերաբերում է ԱՆՑԱԾ 15 տարիներին, որոնց ընթացքում այն պլանավորվել է)
Հիմա, երբ ժամանակը եկել է, որպեսզի նրանք քողազերծեն իրենց **Նոր Համաշխարհային Արժույթը,** իմացեք, որ աղոթքը, և շատ աղոթքը, կարող է օգնել՝ մեղմացնելու համար նրանց պլանի մեծ մասը:
Ահա մի աղոթք՝ կասեցնելու համար Մեկ Համաշխարհային Վերահսկողությունը.
Խաչակրաց արշավանքի աղոթք (61) Կասեցնել Մեկ Համաշխարհային Վերահսկողությունը

Ով սիրելի Երկնավոր Հայր
Ի հիշատակ Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի Խաչելության
Ես աղերսում եմ Քեզ՝ պաշտպանել մեզ՝ քո զավակներին
Այն խաչելությունից, որը պլանավորվում է Հակաքրիստոսի և նրա հետևորդների կողմից՝ Քո զավակներին ոչնչացնելու համար:

Տուր մեզ անհրաժեշտ շնորհները՝ մերժելու համար գազանի նշանը և հեղիր մեզ վրա այն օգնությունը, որի կարիքն ունենք երկրի վրա չարիքի դեմ պայքարելու համար, որը տարածվում է նրանց կողմից ովքեր հետևում են Սատանայի ուղուն:

Մենք խնդրում ենք Քեզ, սիրելի Հայր, որ պաշտպանես Քո բոլոր զավակներին Այս սարսափելի ժամանակներում և մեզ ուժեղ դարձնես, որ ոտքի կանգնենք և հռչակենք Քո Սուրբ Անունը միշտ:
Ամեն:

Աղջիկս, Ես տխուր եմ այս բաները բացահայտելու համար: Իմ հետևորդները կարիք ունեն հասկանալու, թե ինչ է տեղի ունենում:
Նրանք, ովքեր չեն հավատում այս պատգամներին, կասկած չեն ունենա, երբ հակաքրիստոսը ներկայանա այնպես, ինչպես Ես եմ կանխասացել:
Դուք պետք է միավորվեք խմբերի մեջ աշխարհով մեկ՝ աղոթքի մեջ:
Որքան շատերը Իմ հետևորդներից անեն դա, այնքան ուժեղ կլինի Սուրբ Հոգու ներկայությունը, և այդ դեպքում ավելի թույլ կլինի Սատանայի բանակը:
Մի փորձեք վախենալ, քանի որ այդպիսի հալածանքին կարելի է դիմակայել անվախորեն:
Երբ լավ նախապատրաստվեք՝ հետևելով Իմ ցուցումներին և հարատևելով ամենօրյա աղոթքի մեջ, ժամանակը արագ կլինի:
Վստահեք Ինձ միշտ:
Հիշեք, Ես մեռա ձեր մեղքերի համար: Հիմա միայն հարմար է, որ դուք թույլ տաք Ինձ առաջնորդել ձեզ այս ժամանակ դեպի Երկրի վրա Նոր Դրախտը:
Միայն Ես՝ Հիսուս Քրիստոսը, կարող եմ առաջնորդել ձեզ: Հիշեք, որ առանց Ինձ դուք ոչինչ եք:
Ձեր Հիսուս

Ոչ մի մարգարեի չեն տրվել այսքան մեծ քանակությամբ պատգամներ Իմ սիրելի Մոր և Սուրբ Երրորդության կողմից

Երկուշաբթի, 18 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 08:36

Իմ սիրելի աղջիկ, դու չպետք է թույլ տաս, որ քեզ շփոթեցնի Իմ Սուրբ պատգամների մերժումը Իմ այն հետևորդների կողմից, ովքեր գիտես, որ հատկապես նվիրված են Իմ Սուրբ Կամքին:
Այս տեսակի մերժումը ինտենսիվորեն կավելանա, մինչ Իմ Խոսքը կմասնատվի ծվենների և կանտեսվի ասես թե այն ոչինչ է:
Մերժման ցավը, որը զգում ես, Իմ ցավն է: Քեզ հասցված նվաստացումն ու ծաղրը Իմ հալածանքն է: Այդ չհավանությունից վիրավորվելու փոխարեն դու պետք է ընդունես այն լռությամբ:

Ուրախ եղիր արցունքներիդ միջից, քանի որ գիտես հիմա որ Ինձ միշտ մերժել են, նույնիսկ Իմ սեփական աշակերտները:
Եթե թույլ տաս, որ Իմ Խոսքի մերժումը ուշացնի քո կողմից Իմ պատգամների տարածումը, ապա ավելի քիչ հոգիներ կփրկվեն:
Միշտ հիշիր, որ Իմ ամենամեծ ցանկությունը հոգիներ փրկելն է:
Իմ առաքելությունը չպետք է արատավորվի մարդկային կարծիքից, որը պատրաստված է քեզ թուլացնելու համար:
Խոսքերը, որոնք Ես տալիս եմ քեզ այս երեկո, հարմարավետություն ապահովելու համար չեն, այլ շեշտելու համար աշխարհին տրվող Իմ նախազգուշացումների հրատապությունը:
Քեզնից առաջ Աստծո շատ պատգամատարներ են եկել, աղջիկս, նախապատրաստելու մարդկությանը Իմ Երկրորդ Գալուստի համար:
Ոչ մի մարգարեի այդքան մեծ քանակությամբ պատգամներ չեն տրվել Իմ սիրելի Մոր և Սուրբ Երրորդության կողմից:
Միայն այս պատգամները կարող են բացահայտել գալիք ժամանակների գաղտնիքները և առաջարկել այն օրհնությունները, որոնց կարիքն ունեն Աստծո բոլոր զավակները մինչև վերջին օրը:
Ընդունեք ձեզ կյանք տալու համար ողջ մարդկությանը տրված Իմ Խոսքի ընծան:
Առանց Իմ օգնության ձեզ համար շատ դժվար կլինի դիմանալ առջևում սպասվող փորձություններին:
Իմ բոլոր ճշմարիտ պատգամատարները նախապատրաստում են Աստծո զավակներին Իմ Երկրորդ Գալուստի համար:
Իմացեք, որ դա տեղի կունենա այս սերնդի կյանքի ընթացքում:
Վերցրեք Իմ Գավաթը, խմեք նրանից, թող որ այն լցնի ձեզ զանազանության ընծայով, որ կարողանաք օգնել Ինձ՝ հոգիներ փրկել:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Ես, Իմ Որդու հետ, կարող եմ տալ ձեզ շնորհները և պաշտպանության շրջանը, ուր ոչ մի ընկած հրեշտակ չի կարող ներթափանցել

Չորեքշաբթի, 20 հունիսի, 2012թ, առավոտյան ժ 07:46

Զավակս, ինչպես է Իմ Որդին տառապում այս ժամանակ, և ինչպես է Իմ սեփական տառապանքը միահյուսված Նրա տառապանքի հետ:
Նրանք, ովքեր տառապանք են պատճառում ուրիշներին, խաչում են Իմ Որդուն:
Երբ նրանք սարսափելի բաներ են անում, որոնք առաջացնում են դժվարություններ, ցավ և մահ Աստծո զավակների հանդեպ, նրանք վերստին առաջացնում են Իմ Որդու տառապանքը:
Նրանք, ովքեր հետևում են խաբեբայի ուղուն, յուրաքանչյուր վայրկյան գայթակղության են ենթարկվում Սատանայի կողմից առաջնորդվող ընկած հրեշտակների կողմից:
Նրանցից շատերը չգիտեն դա, ուստի դուք պետք է աղոթեք նրանց համար:

Նրանցից շատերը չեն հասկանում, որ իրենք օգտագործվում են չարի կողմից՝ մարդկային ռասայի ոչնչացմանը հասնելու համար:
Շատ շուտով Սատանան կանտեսի նրանց, երբ նրանք այլևս ոչ մի նպատակի չեն ծառայի:
Իմ Որդին կսպասի՝ այդպիսի մեղավորներին ետ՝ Իր Սուրբ Բազուկների մեջ ընդունելու համար, այնքան որ գթառատ է Նա:
Սատանայի կողմից նյութվող չար պլանները, անտեսանելի բոլորի համար, վիշտ են բերելու Իմ Հավիտենական Հորը: Այդ կարծրացած մեղավարները, իրենց եղբայրներին ու քույրերին վիրավորելով, Աստծուն են վիրավորում:
Երբեք չմտածեք, թե նրանք կհասնեն այն ամենին, ինչ սկսել են անել:
Ինձ՝ Աստծո Մորը, որպես Համա_Ազատարար և Բարեխոս, տրվել են օձին ոչնչացնելու շնորհները:
Ինձ խնդրելով, զավակներս, Ես կարող եմ առաջարկել ձեզ պաշտպանություն վախից:
Ես կարող եմ, Իմ Որդու հետ, տալ ձեզ շնորհները և պաշտպանության շրջանը, որը ոչ մի ընկած հրեշտակ չի կարող ներթափանցել:
Սատանան չի կարող վնասել կամ հարձակվել բոլոր նրանց վրա, ովքեր ամեն օր աղոթում են Իմ Սուրբ Վարդարանը:
Երեք կամ ավելի Վարդարաններ աղոթելով դուք կարող եք տարածել այդ պաշտպանությունը ուրիշների նկատմամբ: Եթե նույնիսկ հարյուր հոգի անեն դա, ապա կարող են փրկել իրենց ազգը չարի կողմից տարածվող թունավորումից:
Դուք պետք է հավաքվեք միասին, զավակներս, և աղոթեք՝ ձեզ պաշտպանելու համար:
Դուք պետք է առատաձեռն լինեք սրտով և աղոթեք ձեր թշնամիների համար, քանի որ նրանցից շատերը չեն հասկանում, թե ինչ են անում:
Ամբողջապես Իմ Որդուն վստահելով և Նրա ընծաները ընդունելով, որոնք Նա հիմա բերում է ձեզ Իր ուսուցումների և մարգարեությունների միջոցով, դուք կարող եք վերացնել ձեր ողջ վախը:
Սատանան որսում է և սնվում է վախի միջոցով: Նայեք Ճշմարտությանը և օգտագործեք աղոթքը՝ մեղմացնելու համար այն նյութվող չար պլանները, որոնք գաղտնի նյութվում են չար խմբերի կողմից, ովքեր ցանկանում են ոչնչացնել մարդկությանը:
Զգացեք Իմ Որդու սերը՝ ձեր սրտերը բացելով: Հանձնեք Ինձ՝ Փրկության Մորը, ձեր անհանգստությունները, և Ես կտանեմ դրանք Իմ Որդուն:
Հետո Ես կծածկեմ ձեզ Իմ Ամենասուրբ Թիկնոցով, և դուք կզգաք մի զորություն, որը կարող է գալ միայն Երկնքից:
Միայն այդ ժամանակ դուք կլցվեք խաղաղությամբ, խիզախությամբ և վճռականությամբ՝ դառնալու համար Աստծո բանակի մի մասը: Այդ բանակը, որն արդեն կազմավորվում է, կազմված է բազմություններից՝ յուրաքանչյուր ազգի միջից:
Նրանք կքայլեն մինչև վերջ և չեն կարող մատնվել պարտության:
Շնորհակալ եմ, զավակս, կանչիս պատասխանելու համար:
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Եկեք Ինձ մոտ դուք բոլորդ, ովքեր անարժան են զգում: Ես սպասում եմ ձեզ:

Հինգշաբթի, 21 հունիսի, 2012թ, գիշերվա 12:05

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդները պետք է հասկանան, որ ինչպես ցանկացած լավ ծնող, Ես միշտ կուզենամ այն, ինչն ամենալավն է նրանց համար:
Ես երբեք նրանց չեմ տա այն ամենն, ինչ իրենք ցանկանում են, եթե դա չի համապատասխանում Իմ Ամենասուրբ Կամքին:
Ես երբեք նրանց թույլ չեմ տա շեղվել Ճշմարտության ուղուց առանց հորդորելու նրանց, որ վերադառնան դեպի Ինձ:
Ես միշտ կփորձեմ պաշտպանել նրանց ամեն վնասից:
Ես նաև կպատժեմ նրանց ցանկացած սխալ արարքի համար:
Ես կբարկանամ և կարող եմ բարկանալ, երբ նրանք չարիք են գործում ուրիշների հանդեպ:
Ես նաև կներեմ նրանց, երբ նրանք սխալվում են, եթե իսկապես վշտանում են իրենց սխալ ուղու համար:
Ես համբերատար եմ: Ես հեշտությամբ չեմ ցնցվում շոկից, ոչ էլ չարակամություն եմ պահում:
Ահա թե ինչու նույնիսկ նրանք, ովքեր մոլորվել կորել են և իրենց ներսում դատարկ են զգում, պետք է խնդրեն Ինձ, որ պահեմ իրենց, սիրեմ և բերեմ նրանց այն Աստվածային Սերը, որը նրանց կբերի ճշմարիտ խաղաղություն:
Այնքան շատերն են կորած և մոռացել են Ինձ:
Շատերն իրենց վարած մեղավոր կյանքի պատճառով չեն ցանկանում շրջվել դեպի Ինձ: Նրանք ամաչում են, չգիտեն ինչպես աղոթել և սխալ կերպով հավատացած են, թե իրենց համար չափազանց ուշ է: Որքան սխալ են նրանք: Նրանք երբեք չպետք է մոռանան, որ Ես երկրի վրա Իմ կյանքն առաջարկեցի ձեզանից յուրաքանչյուրի համար:
Ես այդպես հեշտությամբ չեմ հրաժարվում հոգիներից: Ես սիրում եմ բոլոր նրանց, ովքեր իրենց գործողությունների, արարքների և մտքերի միջոցով խատխտում են Իմ Հոր Օրենքները:
Դուք թանկ եք Ինձ համար: Ես սիրում եմ ձեզ այնպես, ինչպես սիրում եմ Աստծո բոլոր զավակներին:
Երբեք չհավատաք, որ ավելի քիչ եք սիրված, քանի որ մեղք եք գործում: Մեղքը, միշդեռ ատելի է Ինձ համար, այն բիծն է, որով դուք ծնվել եք:
Համարյա անհնար է երկրի վրա գտնվող ամեն հոգու համար, որ մեղք չգործի:
Երբեք չզգաք, թե Ես երբեք չեմ օգնի կամ չեմ ողջունի ձեզ գալ Իմ բազուկների մեջ:
Դուք առաջին շարքում կանգնած կլինեք՝ ներս մտնելու համար երկրի վրա Իմ Նոր Դրախտը, որը կտևի 1.000 տարի, երբ շնչվեք դեպի Ինձ:
Ես ձեզ խնդրում եմ միայն որ խոսեք Ինձ հետ այս բառերով.

Խաչակրաց արշավանքի աղոթք (62) Կորած և անօգնական մեղավորների համար
Ով Հիսուս, օգնիր ինձ, քանի որ ես մի կորած, անօգնանկան մեղավոր եմ խավարի մեջ
Ես թույլ եմ և խիզախություն չունեմ Քեզ փնտրելու
Տուր ինձ ուժը՝ կանչելու Քեզ հիմա, որպեսզի կարողանամ դուրս պրծնել իմ հոգու խավարից

Բեր ինձ Քո լույսի մեջ սիրելի Հիսուս, ներիր ինձ

Օգնիր ինձ դառնալ ամբողջական նորից և տար ինձ դեպի Քո Սերը, խաղաղությունը և Հավիտենական Կյանքը:
Ես ամբողջապես վստահում եմ Քեզ և խնդրում՝ վերցնել ինձ մտքով, մարմնով և հոգով մինչ հնազանդվում եմ Քո Աստվածային Կամքին:
Ամեն:

Եկեք Ինձ մոտ դուք բոլորդ ովքեր անարժան եք զգում: Ես սպասում եմ ձեզ: Ձեզ մնում է միայն երկարել ձեր ձեռքը և հասնել Ինձ:
Ես լսում եմ: Ես տեսնում եմ: Ես լաց եմ լինում: Ես սիրում եմ ձեզ:
Ես երբեք տեղի չեմ տա մինչև Իմ բազուկների մեջ չլինեք, և Իմ Աստվածային Գթասրտությունը ողողի ձեր հոգին:
Շուտով դուք վերջապես կտսնեք Իմ Մեծ Գթասրտության Ճշմարտությունը:
Ձեր կասկածները կընկնեն ինչպես մի արտաքին պատյան՝ բացահայտելու համար ձեր հոգին, որը կլցվի լույսով, և դուք վազելով կգաք դեպի Ինձ:
Ես սպասում եմ այդ օրվան մեծ հույսով և ուրախությամբ:
Միայն երբ յուրաքանչյուր խեղճ կորած հոգի իմանա, որ միայն Ես՝ Հիսուս Քրիստոսը կարող եմ փրկել իրենց, միայն այդ ժամանակ Իմ Սիրտը կլավանա:
Հիշեք, Ես դատապարտում եմ մեղքը, բայց Ես սիրում եմ յուրաքանչյուր մեղավորի, անկախ նրանից, թե նրանք ինչ են արել:
Երբեք մի վախեցեք գալ Ինձ մոտ, խոսել Ինձ հետ, քանի որ Ես ձեզ չափազանց շատ եմ սիրում, որ մերժեմ ձեզ երբ ճշմարիտ զղջում եք:
Ձեր սիրող Հիսուս

Մարդը կենդանիներից չի զարգացել, բայց դրան է, որ նրանք, ովքեր չեն հավատում Աստծուն, կստիպեն ձեզ հավատալ

Հինգշաբթի, 21 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 05:30

Իմ սիրելի աղջիկ, ժամանակի սկզբից ի վեր և երբ աշխարհը արարվեց Իմ Հավիտենական Հոր կողմից, բավականին շատ խառնաշփոթություն կա մարդկային ռասայի ծագման մասին:
Երբ Իմ Հայրը ստեղծեց աշխարհը, որպեսզի ընտանիք ունենա, շատ նախապատրաստություն կատարվեց:
Նա ստեղծեց երկիրը, ծովերը, բույսերը, ծառերը, սարերը, գետերը, կենդանիներին և հետո, վերջին հաջորդ օրը, երբ ամեն ինչ իր տեղում էր Դրախտում, Նա ստեղծեց մարդուն:
Մարդը, չնայած աղտոտված է մեղքով, սուրբ արարած է: Կենդանիները մարդկությանը ծառայելու համար են:
Մարդը կենդանիներից չի զարգացել, բայց դրան է, որ նրանք, ովքեր չեն հավատում Աստծուն, կստիպեն ձեզ հավատալ:
Էվոլյուցիայի մասին տեսությունները, որոնք հռչակում են թե մարդն առաջացել է կենդանիներից, սուտ են: Դրանք երբեք չեն կարող ապացուցվել:

Սատանան, նրա ընկած հրեշտակները և յուրաքանչյուր դև, որը դուրս է գալիս Աստծո թշնամուց, համոզել են մարդուն այդ սարսափելի ստի մեջ:
Մարդն Աստծո զավակ է, բայց Աստծո մարդկային զավակին նվաստացնելու համար Սատանան ցանկանում է խառնաշփոթ ստեղծել մարդկության սրտերում:
Ինչու՞ է նա քարոզում այդ սուտը կեղծ ուսուցումների միջոցով: Որպեսզի կարողանա ապացուցել, թե մարդը զարգացել է կապիկներից, իսկ հետո համոզի, որ նրանք Իմ Հավիտենական Հոր Ձեռքով չեն ստեղծված :
Սա սատանայի կողմից նյութված ամենամեծ ստերից մեկն է, օգտագործելով այն մարդկանց հոգիները, ովքեր հայտարարում են, թե իրենք ավելի խելացի են, քան իրենց մնացած եղբայրներն ու քույրերը:
Գիտնականները հայտարարում են, թե մարդը զարգացել է կենդանիներից, բայց նրանք խաբված են:
Գիտությունը խեղաթյուրվում է, երբ փորձում է հայտարարել ճշմարտությունը տիեզերքի արարման մասին:
Ոչ մի մարդ չի հասկանում Աստվածային Արարչության հրաշքը:
Եթե մարդը հավատացած է, թե գիտի մարդկության ծագման մասին բոլոր պատասխանները՝ հիմնված մարդկային մտածողության վրա, ապա նա խաբում է ոչ միայն այլ խեղճ հոգիների, այլև ինքն իրեն:
Երբ այդպիսի հոգիների մեջ ներկա չէ Աստծո սերը, ովքեր հավատում են մարդկային խելքի գերակայությանը, ապա աթեիզմը տարածվում է մոլախոտի պես:
Այդ մոլախոտը, որն աճում է ամեն ուղղությամբ, թունավորում և ոչնչացնում է ամեն երևացող բերք և առաջացնում է հիվանդություն:
Միակ բուժումը Աստծուց օգնություն խնդրելն է խոնահ աղոթքի միջոցով և խնդրելը, որ Ճշմարատությունը բացահայտվի:
Աթեիստների կողմից տարածված այնքան շատ ոչ ճշմարտություններ են ոչնչացրել միլիոնավոր մարդկանց, ովքեր փորձում են ապացուցել, թե Աստված գոյություն չունի: Նրանց զոհերը ձեր աղոթքների կարիքն ունեն:
Աթեիզմը աշխարհում ամենամեծ կրոնն է, և նրանք, ովքեր իրենց կյանքը նվիրաբերել են այդ խաբեությանը, կորած են հավիտյան:
Նրանք կկանգնեն դժոխքի կրակների առաջ:
Եթե նրանք չշրջվեն դեպի Ինձ Նախազգուշացման ընթացքում կամ դրանից հետո, նրանք կտառապեն սարսափելի պատժից:
Աղոթեք նրանց համար:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Աշխարհը գլխիվայր շրջվել է հեթանոսությունից

Շաբաթ, 23 հունիսի, 2012թ, առավոտյան ժ 10:50

Զավակներս, ես կոչ եմ անում բոլորիդ միանալ աղոթքի մեջ՝ մեղավորների դարձի համար և շարունակել ձեր ամենօրյա աղոթքները:
Պահեցողությունը կփրկի այնքան շատ հոգիների, և մի մեծ ընծա է՝ Իմ սիրելի Որդուն:
Այնքան շատերն են աշխարհում շրջվել Իմ Որդուց:

Ինչպես է Նա լալիս այս ժամանակ: Նա այնքան շատ է սիրում նրանց, և սիրտ է կոտրվում տեսնել հատկապես նրանց անհավատարմությունը, ովքեր ընդունում են, որ Նա Ամենաբարձրյալ Աստծո ճշմարիտ Որդին է:
Աշխարհը գլխիվայր շրջվել է հեթանոսությունից: Այն դարձել է խառնաշփոթի, ատելության, իրարանցման ու անհանգստության վայր:
Դա նման է դժոխքի վիճակին, չնայած սարսափեցնող և ցավալի ոչինչ չկա: Բայց չարի զորությունը ստեղծել է այդ ատելի լարվածությունը, և այն շրջապատում է Աստծո բոլոր զավակներին:
Շատ քչերին չի դիպել թույնը, որը տարածվում է խավարի կողմից ամեն մի ազգի մեջ: Այնքան շատերն են կուրացել այդ խավարից և հույս չունեն:
Շատերը չեն շրջվում դեպի Աստված և շարունակում են մի ճանապարհով, որը նրանց բերում է շատ դժբախտություն:
Նրանք, ովքեր սիրում են Աստծուն, բայց քիչ ուշադրություն են հատկացնում Նրան աղոթքի միջոցով, նույնքան անօգնական են:
Միայն աղոթքը, պաշտամունքն ու զոհաբերությունը կարող են ձեզ մոտեցնել Աստծուն: Ուրիշ ոչ մի բան ձեզ խաղաղություն չի բերի:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք այն հոգիների համար, ովքեր պաշտում են կեղծ աստվածների: Նրանք աղոթքի շատ կարիք ունեն այս ժամանակ:
Աղոթեք չարի կողմից գայթակղվածների համար, ով դժբախտություններ է բերում նրանց, ովքեր իրենց վերահսկողության տակ են:
Նրանք քիչ ժամանակ ունեն մինչև Խոստովանությունը՝ Նախազգուշացումը: Երբ այդ օրը գա, նրանք պետք է ցույց տան խոնարհություն, երբ ճշմարտությունը բացահայտվի իրենց:
Իմ Որդու մեծ պլանը՝ փրկելու մարդկությանը, պարաստ է բացահայտվելու աշխարհին:
Շատերը չեն փրկվի:
Ահա թե ինչու Նրա բոլոր սիրող աշակերտները պարտականություն ունեն հիմա՝ աղոթել դարձի համար, որպեսզի որքան հնարավոր է շատ հոգիներ փրկվեն:
Գնացեք խաղաղությամբ, զավակներս, հանգստացած այն գիտությամբ, որ Իմ Որդին միշտ ողորմած է:
Նա ցանկանում է փրկել բոլորին, և Խոստովանությունն այն Ընծան է, որը Նա ներկայացնում է աշխարհին այդ անելու համար:
Նախազգուշացումը մեծագույն Ընծան է՝ մարդկությանը, Խաչի վրա Նրա Մահից ի վեր:
Ուրախացեք, քանի որ շատ հոգիներ, ովքեր այլապես կտառապեին դժոխքում հավիտենությունը, կարող են փրկվել և ստանալ Հավիտենական Կյանքի Ընծան:
Շնորհակալ եմ Երկնքից եկող այս կանչին պատասխանելու համար:
Ձեր սիրող Մայր Աստծո
Մայր Փրկության

Երբ տարածում եք ատելություն Երկնքից ուղարկված մարգարեների մասին, մեղավոր եք մի մեղքի մեջ, որն ունի հսկայական հետևանքներ

Կիրակի, 24 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 05:30

Իմ սիրելի աղջիկ, ինչպես է Իմ սիրտը կոտրվում, երբ տեսնում եմ նրանց, ովքեր ասում են, թե Աստծո հետևորդներ են և մեծամտորեն ցուցադրում են Նրա Օրենքները: Նրանք կեղծավորներ են:
Այդ նրանք են, որ ասում են թե հետևում են Իմ Հոր Պտվիրաններին, բայց կարծում են թե կարող են արհամարհել ուրիշներին, ովքեր մեղք են գործում:
Այսպես կոչված հանդուժողականություն քարոզելով, նրանք առաջինն են վերցնում Սուրբ Գիրքը /օգտագործելով/ որպես միջոց՝ սուտ հռչակելու համար, նրանք մեծապես վիրավորում են Ինձ:
Սրանք այն մարդիկ են, ովքեր ասում են, որ սխալ է Աստվածային Նախախնամությանը հավատալը:
Սրանք այն մարդիկ են, ովքեր դարեր շարունակ հարցականի տակ են դնում Երկնքի կողմից ուղարկված տեսանողներին, իսկ հետո փորձում են մերժել նրանց Սուրբ Գրքում գրված Իմ Սուրբ Խոսքն օգտագործելու միջոցով:
Ցանկացած մարդ, ով մերժում է Իմ Խոսքը, հավատարիմ չէ Ինձ:
Ցանկացած մարդ, ով իրեն առանձնացնում է իր եղբայրներից ու քույրերից որպես ինտելեկտուալ կերպով գերակա, պետք է զգույշ լինի:
Ցանկացած մարդ, ով օգտագործում է Սուրբ Գիրքը՝ ներկայացնելու համար Ճշմարտության շրջված տարբերակ, կպատժվի:
Ցանկացած մարդ, ով ոտքի է կանգնում և հռչակում Ճշմարտությունը, սակայն չի ընդունում այս վերջին ժամանակներում աշխարհին տրվող Իմ Խոսքը, մի կողմ կնետվի Իմ կողմից:
Դուք մեղավոր եք հոգևոր նախանձի մեջ, և դրա համար կկանգնեք պատժի առաջ:
Երբ ատելություն եք տարածում Երկնքի կողմից ուղարկված մարգարեների հանդեպ, ապա մեղավոր եք մի մեղքի մեջ, որն ունի հսկայական հետևանքներ:
Որովհետև այդպես անելով դուք ոչ միայն սուտ եք հռչակում, դուք խոչընդոտում եք Աստծո Խոսքին:
Ես խնդրում եմ, որ դադարեցնեք տանջելու և զրպարտելու ձեր քարոզարշավը հիմա: Դուք երբեք չեք արգելի որ Իմ Խոսքը լսվի:
Ինչու՞ եք շարունակում փորձել չարչարել այս Առաքելությունը: Մի՞թե մինչև հիմա չհասկացաք, որ Սուրբ Հոգու կրակը չեր կարող տարածվել այնպես, ինչպես տարածվել է, եթե Իմ Պատգամները Երկնքից չլիներին:
Ձեզ օգտագործում է չարը, ով ոչ մի բանի առաջ կանգ չի առնի արգելելու համար, որ Իմ այս Սուրբ Պատգամները տրվեն աշխարհին:

Պատգամ հոգևորականների համար.

Ձեզնից նրանք, ովքեր սրբազան երդում են տվել որպես երկրի վրա Իմ Եկեղեցու ծառա, լսեք Ինձ հիմա.

Երբ դուք հրապարակայնորեն մերժում եք Իմ Պատգամները և արգելում Ինձ՝ ձեր Հիսուսին հոգիներ փրկելու այս առաքելության մեջ, դուք ամենամեծ մեղքն եք գործում:
Դուք կտառապեք դրա համար, և ձեր քավարանը կզգաք երկրի վրա: Յուրաքանչյուր մարդ, կին և երեխա ականատես կլինի Երկնքի դեմ ձեր կատարած վիրավորանքին:
Իմ մարգարեների հանդեպ ձեր խեղաթյուրված գնահատականը ձեզ հոգևորապես դատարկ կթողնի և ձեր հոգին կտառապի մի չտեսնված տառապանքով:
Եթե դուք Իմ սրբազան սպասավորներից եք և վստահ չեք Իմ Ձայնի հանդեպ, մինչ Ես հիմա խոսում եմ ձեզ հետ, դուք պետք է լուռ մնաք: Դուք պետք է աղոթեք զանազանության համար, նախքան կմտածեք մերժել Իմ Սուրբ Խոսքը
Իմ սրբազան սպասավորներից հազարավորները չեն կարողանա ճանաչել վերջին ժամանակների այս մարգարեի մեջոցով ուղարկված Իմ Խոսքը: Ինչպես է դա կոտրում Իմ Սիրտը:
Շատերը կընկնեն հակաքրիստոսի իշխանության տակ և կամայացնեն երկրի վրայի Իմ Եկեղեցին:
Իմ սրբազան սպասավորներից շատերը կկանգնեն Իմ Եկեղեցին հալածողների կողքին: Գայթակաղությունն արդեն սկսվել է:
Խաբեբան նախապատրաստում է ձեզ, որ մերժեք Ինձ, իսկ ձեր հպարտությունը խանգարում է ձեզ տեսնել դա:
Իմ սրբազան սպասավորներից շատերը բավարար չափով խիզախ չեն լինի վեր պահելու համար Երկրի վրայի Իմ Եկեղեցին: Շատերը կկանգնեն Կեղծ Մարգարեի կողքին և կմերժեն Իմ հոտը, որոնց հավատը հնարավորություն կտա նրանց փնտրելու Ճշմարտությունը:
Մի՞թե չգիտեք, որ Ես Եկեղեցին եմ:
Մի՞թե չգիտեք, որ Եկեղեցին կտառապի իր սեփական խաչելությամբ, ինչպես Ես տառապեցի:
Նրան /եկեղեցուն/ կտանջեն: Նա խաչված կթվա, և շատերը կմտածեն թե այն մեռած է:
Բայց ինչպես Իմ Հարությունը, նա նորից վեր կբարձրացվի դեպի կյանք, քանի որ հասկացեք, որ այն հնարավոր չէ ոչնչացնել:
Ես նախազգուշացնում եմ Իմ բոլոր սրբազան սպասավորներին, ովքեր չեն ճանաչում իրենց ապրած ժամանակները, որ հիմա զգոն լինեն, քանի որ երկրի վրայի Իմ Եկեղեցին կրում է երբևէ կրած իր ամենամեծ տառապանքը:
Դուք պետք է նախապատրաստվեք և բացեք ձեր աչքերը:
Ձեր կարծքով Ես ե՞րբ պետք է գամ և նախազգուշացնեմ ձեզ: Մի՞թե կարծում եք, թե դա ապագայում ինչ-որ ժամանակ է լինելու: Որ այն երբեք չի լինի ձեր կյանքի ընթացքում:
Իմ Երկրորդ Գալուստի ժամանակը շատ մոտ է:
Ես շուտով կբաժանեմ բարիներին չարերից այն բանից հետո, երբ ամեն ջանք կարվի մարդկության մեծ մասին դարձի բերելու համար:
Ձեր պարտքն է ու պարտականությունը՝ բաց պահել միտքը, սիրտը և հոգին:
Ես կարիք ունեմ, որ դուք արձագանքեք Իմ աղերսին՝ օգնելու Ինձ փրկել որքան հնարավոր է շատ հոգիների:
Հետևեք Ինձ: Դուք դրա համար եք կանչված:
Սրա համար եք դուք հավատարմության խոստում տվել Ինձ՝ ձեր Հիսուսին:
Դուք ձեր խոստումները չեք տվել ձեր սեփական պայմաններով:

Դուք պետք է թույլ տաք Ինձ ուղղություն տալ ձեզ և օգնել պաշտպանելու համար Եկեղեցին երկրի վրա:
Շատ վնաս է հասցվել Իմ Եկեղեցուն: Իմ Եկեղեցին բաղկացած է բոլոր նրանցից, ովքեր սիրում են Ինձ, ներառյալ Իմ բոլոր սրբազան սպասավորները:
Դուք պետք է լինեք ուժեղ, խիզախ և հավատարիմ; Դուք չպետք է թույլ տաք, որ վախը կամ գազանը խժռեն ձեր հոգին:
Լսեք Իմ Խոսքը նախքան կանտեսեք Իմ մարգարեներին:
Երբեք մի մերժեք Իմ պատգամներից ոչ մեկը առանց զանազանության համար աղոթելու: Նույնիսկ այդ ժամանակ պետք է զգույշ լինեք, որ չզրկեք Աստծո զավակներին այն շնորհների ընծայից, որոնք Ես հիմա հեղում եմ այն խեղճ հոգիների վրա, ովքեր քաղցում են Իմ Ուսուցումների Ճշմարտությանը:
Նրանք, ովքեր բացահայտորեն մերժում են այս մարգարեին տրվող Իմ Խոսքը, իմացեք, որ Ինձնից ներողամտություն կխնդրեք երբ Ճշմարտությունը բացահայտվի: Այդ ժամանակ նրանց համար, ովքեր պատախանատու կլինեն Ինձնից հոգիներ հեռացնելու համար, չափազանց ուշ կլինի:
Ձեր չար լեզվի պատճառով Ինձ համար կորած այդ հոգիները հավիտենական կյանք չեն ունենա:
Մերժեք Իմ Խոսքը հիմա, կամ էլ հրաժարվեք Իմ Պատգամից՝ սխալներ ունենալու համար, և դուք մի կողմ կնետվեք: Դուք հարմար չեք Իմ հոտին առաջնորդելու համար:
Ձեր Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Ես ճանաչում եմ Իմ յուրայիններին, և նրանք ճանաչում են Ինձ

Երկուշաբթի, 25 հունիսի, 2012թ, առավոտյան ժ. 11:50

Իմ սիրելի աղջիկ, դու երբեք չպետք է մոռանաս այս առաքելության ահռելիությունը: Շատ անգամ քեզ կքաշեն խաբեբայի կողմից դրված թակարդների մեջ՝ քեզ խաբելու համար:
Անողորմ կերպով, նա և բոլոր նրանք ում նա հեշտությամբ առաջնորդում է, կանեն ամեն ինչ՝ վարկաբեկելու համար քեզ տրվող Իմ Խոսքը:
Դու պետք է բարձրանաս և անտեսես այդպիսի խայթոցները:
Քանի որ դու տվել ես /Ինձ/ քո ազատ կամքը, հիմա ամենակարևորը Իմ հանդեպ քո հնազանդությունն է:
Թույլ տուր Ինձ Իմ Աստվածային Իմաստությամբ քո առջև դնելու Երկրի վրա Դրախտ տանող Իմ կատարյալ ուղին:
Իմ հետևորդները նույնպես պետք է ուշ դարձնեն Իմ նախազգուշացումներին: Դուք կատաղի հարձակման կենթարկվեք, ձեզանից ամեն մեկը և յուրաքանչյուրդ, Իմ Խոսքը հռչակելու համար:
Սա նմանը չունեցող առաքելություն է:
Դուք, Իմ բանակ, կառաջնորդեք Իմ Մնացորդ Եկեղեցու հոտը դեպի Դրախտի դարպասները:

Սա ձեր հանդեպ մեծ անձնական հալածանքի պատճառ կլինի, և հեշտ չի լինի ճանապարհը:
Դուք պետք է միավորվեք և միմյանց ուժ տաք, քանի որ թվի մեջ սփոփանք կգտնեք միմյանց հանդեպ:
Երկրի բոլոր անկյուններում Իմ բանակը հավաքվում է հիմա:
Բոլոր տեսանողները, ովքեր Իմ Մոր միջոցով հաղորդակցվում են Աստվածային Ճշմարտության հետ հիմա, կվառեն Սուրբ Հոգու բոցը Իմ մարգարեների հետ միասին, որպեսզի մնացորդ բանակը ինչպես հարկն է նախապատրաստվի առջևում սպասվող մարտին:
Երբեք չկասկածեք Իմ Սիրուն: Հիշեք, որ միայն նրանք, ովքեր հետևում են Ինձ, կարող են մտնել Նոր Դրախտ:
Երբ նրանք, ովքեր կգան ձեզ մոտ և տառապանք կպատճառեն ձեզ, հիշեք, որ ձեր պարտականությունը նրանց ներելն է և նրանց հոիգների համար աղոթելը:
Սեր ցույց տվեք նրանց հանդեպ, ովքեր տանում են ձեզ Իմ Անվամբ: Այս կերպ կարող եք պարտության մատնել Սատանային, և նա կկորցնի ձեր վրա ունեցած իշխանությունը:
Ես կհրահանգավորեմ ձեզ ձեր ճամփորդության յուրաքանչյուր քայլի ընթացքում:
Ես քայլում եմ ձեզ հետ միշտ:
Ես ճանաչում եմ Իմ յուրայիններին, իսկ նրանք ճանաչում են Ինձ:
Ձեր Հիսուս

Նոր Դրախտը. Դուք պատրաստված կլինք մաքուր մարմնով, անեղծ, ազատ հիվանդությունից, ֆիզիկական մահից և ծերացումից

Երեքշաբթի, 26 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, Նոր Դրախտն ավարված է իր ողջ փառքով, պատրաստ երկրի վրա Աստծո բոլոր զավակների համար:
Այն կներկայացվի իր ողջ փառքով, ճիշտ ինչպես այն Դրախտը, որն ստեղծվել էր Իմ Հոր Կողմից իր զավակների համար ամենասկզբում:
Ինչպես են հրեշտակներ երգում և ուրախանում, քանի որ չհավատացող աշխարհին այս մեծ հմայքի բացահայտման ժամանակը շատ մոտ է:
Այն կներկայացվի Իմ կողմից, երբ Նոր Երուսաղեմն իջնի երկրի վրա Իմ Երկրորդ Գալուստի ազդարարության ժամանակ:
Քեզ, աղջիկս, կասվի, որ հայտարարես այդ մասին հենց Իմ հայտնվելուց անմիջապես առաջ:
Միայն նրանք, ովքեր Ինձ ընդունում են որպես Մեսիա, կկարողանան մտնել նրա փառահեղ դարպասներից ներս:
Ամեն կանչ կարվի Երկնքից հասնելու համար բոլոր նրանց, ովքեր կմերժեն Իմ մեծ ընծան, մինչև վերջին փողի հնչելը:
Դրանից հետո չափազանց ուժ կլինի այդ խեղճ հոգիների համար: Դրանից հետո նրանք օգնություն ստանալուց այն կողմ կլինեն, **քանի որ Իմ Գթասրտությունը ետ շպրտված կլինի Իմ Դեմքին բացարձակ մերժումով:**

Հիմա ամենակարևորը բոլոր նրանց նախազգուշացնելն է, ովքեր իրենց հոգին Սատանային կորցնելու վտանգի տակ են:
Հավաքեք նրանց, Իմ հետևորդներ: Զգուշորեն ուղղություն տվեք նրանց դեպի Իմ հոտը: Երբեք չթողնեք նրանց փրկության համար ասվող աղոթքները:
Ոհ, Իմ սիրելի հետևորդներ, եթե կարողանայիք տեսնել Նոր Դրախտը, երբ Երկինքն ու Երկիրը կբախվեն կդառնան մեկ, ապա ծնկի կգայիք և ուրախությունից ու թեթևությունից լաց կլինեիք:
Նրանք, ովքեր վախեցած են վերջին ժամանակների համար, երբ ձեր իմացած երկիրը որպես այդպիսին կփոխվի, դուք պետք է Ինձ թույլ տաք թեթևացնել ձեր անհանգստությունը:
Դուք կտանեք ձեր ընտանիքը ձեզ հետ և կուրախանաք մաքուր ամբողջական սիրո և ներդաշնակության մեջ:
Դուք պատրաստված կլինեք մաքուր մարմնից, անեղծ, ազատ հիվանդությունից, ֆիզիկական մահից և ծերացումից:
Դուք բոլորդ կունենաք ձեր բնակարանը՝ խոտով, ծառերով, սարերով, գետերով, ջրերի աղբյուրներով և ծաղիկներով, որոնք կշրջապատեն ձեզ իրենց ողջ փառահեղ գեղեցկությամբ:
Կենդանիները կլինեն ընտանի և կապրեն խաղաղության և ներդաշնակության մեջ Աստծո բոլոր զավակների հետ:
Դուք կտեսնեք ձեր զավակների ամուսնանալը, զավակներ ունենալը, և մեռածներից բարձրացած ընտանիքների հրաշքին ականատես կլինեն բոլորը:
Այս հարությունը ոչ մի ուրախության հետ չի համեմատվի:
Դուք կնորացվեք ձեր սիրելիների հետ միասին , ովքեր մահացել են այս կյանքում և գնացել Դրախտ:
Դուք կունենաք ազգեր, ամբողջը՝ տասներկու ազգ, տասներկուսն էլ կարևորված Իմ Մոր Անարատ գլխի թագով, որոնց բոլորի վրա կթագավորեմ Ես Իմ Առաքյալների և Մարգարեների հետ:
Սա է Իմ Թագավորությունը՝ խոստացված Իմ Հոր կողմից այն ժամանակից ի վեր, ինչ Նա ստեղծեց Դրախտը Երկրի վրա: Ով էլ որ մերժի այն, կոչնչանա:
Աղոթեք, որ Աստծո բոլոր զավակներն ունենան հոգու այն մաքրությունը, որը հնարավոր կդարձնի նրանց համար գալ տուն՝ Երկրի վրա Իմ Հոր Դրախտը, ինչպես սկզբում էր, հիմա է և կլինի՝ աշխարհ առանց վերջի, ընդմիշտ:
Ձեր Հիսուս

Հայր Աստված. Ես բացահայտում եմ Նոր Երկնքի և Նոր Երկրի համար Իմ հետագա պլանները

Չորեքշաբթի, 27 հունիսի, 2012թ, երեկոյան ժ 08:00
Իմ սիրելի աղջիկ, այսօր Ես Իմ բոլոր զավակներին բացահայտում եմ Նոր Երկնքի և Նոր Երկրի համար Իմ հետագա պլանները:
Երբ նրանք միանան դառնան մեկ փառահեղ Դրախտ, կլինեն տասներկու ազգեր:
Այդ ազգերը բաղկացած կլինեն աշխարհի որոշ ազգերից, որոնք հավատարմություն են ցուցաբերել Իմ՝ Հայր Աստծո, Որդի Հիսուս Քրիստոսի և Աստծո Մոր՝ Երկնքի Թագուհու հանդեպ:

Ցրվածները կմիավորվեն, միանալու համար մյուս ազգերին որպես մեկ՝ միավորված ինչպես մեկ Սուրբ Ընտանիք:
Իմ Կամքը պատվի կարժանանա: **Դուք բոլորդ կունենաք ազատ կամքի ընծան, բայց այն կմիահյուսվի Իմի հետ:** Միայն այդ ժամանակ Դրախտի ճշմարտությունն իսկապես կբացահայտվի:
Իմ Տասներկու ազգերը խորհրդանշված են Հայտնության Գրքի Կնոջ վրայի տասներու աստղերով:
Այդ կինը Աստծո Մայրն է, և նա կրում է տասներկու աստղերը՝ խորհրդանշելու համար երկու բան.
Տասներկու առաքյալներն օգնեցին Իմ Որդում հիմնելու համար Երկրի վրայի Նրա Եկեղեցին:
Տասներկու հատկապես ընտրված ազգերը կկազմեն միակ ճշմարիտ առաքելական Եկեղեցին Նոր Երկրի վրա, երբ Երկինքն ու Երկիրը միաձուլվեն որպես մեկ Իմ Նոր Փառահեղ Դրախտում:
Սա է այն պահը, որին Ես համբերատարությամբ սպասել եմ:
Իմ Աստվածային Կամքը, որն ստեղծեց Դրախտը Ադամի և Եվայի համար, և որը մի կողմ նետվեց չարի կողմից պատճառված գայթակղության կողմից, հիմա կկատարվի, և այս անգամ Դրախտը կլինի կատարյալ:
Իմ Որդին՝ մարդկության Թագավորը, Տիեզերքի Թագավորը, կթագավորի Երկրի վրա Իմ Նոր Դրախտի վրա:
Նա առաջնորդներ կնշանակի յուրաքանչյուր ազգի մեջ՝ բոլորը միավորված Իմ Աստվածային Կամքով:
Այդ ազգերի ժողովուրդը կպատվեն Իմ Որդուն այն ձևով, որով Նրան պետք է պատվել, միակ ձևով՝ միմյանց հանդեպ խաղաղությամբ և սիրով:
Նրա Օրհնյալ Մայրը՝ Փրկության մայրը, թագադրվել էր Երկնքի Թագուհի և կթագավրի նաև որպես Նոր Դրախտի Թագուհի:
Երնքում Նրա Թագադրումը հետագայում աշխարհի փրկության գործում նրա դերի չափազանց յուրահատուկ Աստվածային Ներկայացումն էր նաև:
Նա թագադրվեց մեծ պատվով և ճոխությամբ այն դերի համար որը կատարեց ոչ միայն որպես Աստծո Մայր և Սուրբ Հոգու նշանած, այլև որպես Փրկության Մայր, որին տրված է Սատանային ոչնչացնելու զորությունը:
Իմ Սիրելի Որդին էր, որ սիրով դրեց տասներկու աստղերով թագը Աստծո Մոր գլխին նրա Թագադրության ժամանակ:
Իմ Որդին է, որ Նրա գլխին կդնի թագը Նոր Դրախտում որպես Աստծո բոլոր զավակների Թագուհի:
Մարդկությանը փրկելու Իմ Աստվածային Պլանն արդեն սկսվել է:
Իմ ցանկությունն է, որ այս Առաքելությունն օգնի Ինձ հավաքելու կորած հոգիների աշխարհի բոլոր մասերում և փրկի նրանց թշնամուց նախքան չափազանց ուշ կլինի:
Իմ Աստվածային միջամտությունը կապացուցի Իմ բոլոր զավակների հանդեպ Իմ ունեցած սերը:
Ոչինչ ահնարին չէ: Ոչինչ անհույս չէ Սատանայի բանակի դեմ Իմ մարտում:
Ես կբերեմ ձեզ մի նոր աշխարհ, որը կապշեցնի ձեզ իր ողջ ճոխ փառքով: Այն պատրաստ է:
Նրա գեղեցկությունն ու հմայքը ձեր մարդկային երևակայության սահմաններից այն կողմ է:
Երբ տեսնեք այն, հավիտենական կյանք կունենաք:

Աղոթեք, որ Իմ այն խեղճ զավակները, ովքեր չեն հավատում Ինձ՝ Ամենաբարձրյալ Աստծուն, ովքեր չեն ենթարկվում Իմ Օրենքներին և սարսափելի ոճրագործություններ են կատարում միմյանց դեմ, ապաշխարեն:
Ես չեմ ցանկանում կորցնել Իմ ոչ մի զավակին:
Օգնեք Ինձ՝ բերելու համար նրանց այդ հրաշալի փառահեղ ժառանգությունը:
Դժբախտաբար, դա պետք է լինի նրանց ազատ կամքով:
Ես սիրում եմ ձեզ, զավակներս, մի սիրով, որն անհայտ է մարդկությանը:
Եկեք Ինձ մոտ Իմ Որդու միջոցով որպես մեկ:
Երկրի վրա Նոր Դրախտի ժամանակը շատ մոտ է, բայց ձեզ ժամանակ է հատկացվել՝ օգնելու դարձի բերել մարդկությանը երկրի վրա 7-րդ հրեշտակի այս Ասաքելության միջոցով, ով աշխատում է Իմ Որդու հետ՝ Իմ ընտանիքը Ինձ մոտ բերելու համար:
Ձեր Սիրող Հայր
Արարիչ ամեն տեսանելի և անտեսանելի բաների
Ամենաբարձրյալ Աստված

Իմ Եկեղեցին պետք է վստահի Ինձ: Նրանք պետք է հեռացնեն իրենց վախի և կասկածի կապանքները և թույլ տան Ինձ որ հայտնի դարձնեմ Ինձ

Հինգշաբթի, 28 հունիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, պետք է հայտնի լինի, որ նրանց թիվն ավելանում է, ովքեր հայտարաում են թե գալիս են որպես մարգարեներ Իմ Անվամբ, բայց չեն խոսում Երկնքի լեզվով:
Այդ հոգիներից այնքան շատերն են վարակվում ընկած հրեշտակներից և խոսում զգուշորեն կառուցված, բայց սիրող տոներով, որոնք կստեղծեն այն տպավորությունը, թե Իմ Սուրբ Ձայնն եք լսում:
Ոհ, ինչպես են Իմ խեղճ, նվիրված հետևորդները խաբվում հիմա, և որքան շփոթված կլինեն նրանք: Ու՞մ վստահել: Ո՞ւմ հետևել: Ո՞ւմ հավատալ:
Մի՞թե չեմ ասել, որ շատերը կգան Իմ Անունով, բայց քչերը կխոսեն Իմ Ձայնով:
Քսանից էլ քիչ են նրանք, ում թույլ է տրվել հաղորդել աշխարհին Աստծո Խոսքը, և սա ներառում է նրանց, ում Երկնքից տրվել են Աստվածային պատգամներ Իմ սիրելի Մոր կողմից:
Ուրիշ շատ տեսանողներ էլ կան աշխարհում, բայց նրանց առաքելությունն ուրիշ է:
Նրանց դերը կարող է լինել ամենօրյա աղոթքը՝ մարդկությանը փրկել օգնելու համար, կամ՝ անձնական տառապանքը, որն առաջարկվում է Ինձ որպես ընծա՝ Սատանայից հոգիներ փրկելու համար: Այս կերպ տառապանքը՝ կամավորապես, ճզմում է Սատանայի ունեցած զորությունը շատ մարդկային հոգիների վրա:
Իմ մարգարեները քիչ են, և դուք նրանց կճանաչեք Իմ ճշմարիտ Ձայնի միջոցով, որը կհարվածի Աստծո զավակների սրտերն ու հոգիներն այնպիսի ձևով, որն անհնար է անտեսել:
Այս ժամանակների համար աշխարհին տրվող Իմ պատգամները կլինեն մանրամասն և կքողազերծեն ճշմարտություններ, որոնք նախկինում չեն բացահայտվել:

Այն ամենի մեծ մասը, ինչ Ես տալիս եմ ձեզ հիմա, պարզապես Իմ Ուսուցումների մասին ձեզ հիշեցնելու համար է:
Այն ամենի մեծ մասը, ինչը Ես ներկայացնում եմ ձեզ հիմա, կյանքի սնունդն է, որը ձեզ տրվում է Իմ Խաչակրաց արշավանքի աղոթքների միջոցով, որպեսզի օգնի փրկելու ձեր և մյուսների հոգիները Իմ Երկրորդ Գալուստի ժամանակ:
Ուրիշներին տրվող շատ այլ պատգամներ նման կլինեն, բայց այդքան մանրամասն չեն լինի:
Նրանց առաքելությունները նույնքան կարևոր են, քանի որ դարձի կբերեն հոգիների:
Միշտ հիշեք սա: Ես փորձում եմ ցույց տալ ձեզ, թե որքան շատ եմ ձեզ սիրում, և ցանկանում եմ բացահայտել Իմ գոյության ճշմարտությունը:
Սրա ապացույցը վերջապես կբացահայտվի Աստծո բոլոր զավակներին շուտով:
Խնդրում եմ, մի վիճեք միմյանց հետ՝ փորձելով գերազանցել մեկդ մյուսին ձեր հոգևոր գիտելիքի իմաստով:
Ճշմարտությունը սա է:
Ոչ մի մարդ չգիտի Հայտնության Գրքում թաքցված Կնիքի մեջ պարունակվող Ճշմարտությունը:
Ինչպես նախկինում ասել եմ, դրանք կնքվեցին Ճշմարտության Գրքում, մինչև հիմա՝ վերջին ժամանակը:
Ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Գառը, հիմա բացում եմ դրանք նախապատրաստելու համար ձեզ Իմ Նոր Թագավորությանը:
Ձեզ տրվել է Սուրբ Գիրքը, որ նախապատրաստի ձեզ, և հիմա դուք պետք է թույլ տաք Ինձ՝ ողջ մարդկության Թագավորին, ասելու ձեզ Ճշմարտությունն այն մասին, ինչ գալու է:
Այդ անելով, Ես կկարողանամ առաջնորդել ձեզ խաբեության, հալածանքի և ատելության ականապատված դաշտով:
Թույլ տվեք Ինձ, դուք բոլորդ, Երկրի վրա Իմ Եկեղեցու բոլոր անդամներդ, անց կացնելու ձեզ դեպի Հավիտենական Կյանք տանող այս վերջին խոչընդոտների վրայով:
Իմ Եկեղեցին պետք է վստահի Ինձ: Նրանք պետք է հեռացնեն վախի և կասկածի իրենց շղթաները և թույլ տան, որ Ես Ինձ հայտնեմ այս պատգամների միջոցով:
Ճանաչեք Իմ Սերն իր մաքուր և պարզ տեսքով:
Իմ Սերը բարդ չէ և ծածկված չէ առեղծվածներով:
Այն պարզ է, որ տեսնեք և լի է այնպիսի կարեկցանքով, որ կկտրի կանցնի ձեր միջով ճանաչման բոցի պես երբ վայր գցեք հպարտության ու վախի ձեր զրահը:
Երբ անեք այդ, ձեզ համար ավելի հեշտ կլինի հետևել Ինձ՝ ձեր Հիսուսին:
Ես եկա որպես Փրկիչ առաջին անգամ:
Ես գալիս եմ, մեկ անգամ ևս, որպես Փրկիչ այս վերջին անգամ: Միայն թե այս անգամ Իմ առաջադրանքն ավելի ծանր է:
Աստծո Սերը մահանում է աշխարհում: Այն միայն մի կայծ է:
Եթե Իմ Երկրորդ Գալուստը տեղի ունենար հիմա, շատ քչերը կմտնեին Դրախտ:
Նախազգուշացումը՝ Իմ Աստվածային Գթասրտության Իմ Ընծան, կօգնի դարձի բերել մարդկության մեծ մասին:
Օգնեք Ինձ նախապատարստելու Իմ հոտին: Ես կարիք ունեմ, որ Երկրի վրայի Իմ Եկեղեցին, թե հոգևորականությունը և թե աշխարհիկ մարդիկ, օգնեն Ինձ փրկելու Աստծո բոլոր զավակներին:

Խնդրում եմ ընդունեք Իմ Ձեռքը, մինչ Ես հասնում եմ և պարզում Իմ Կոչը բոլոր ազգերին:
Եկեք Ինձ հետ՝ ձեր սիրող Հիսուսի հետ:
Հետևեք Ինձ այս անգամ:
Մի մերժեք Ինձ ինչպես փարիսեցիները մերժեցին:
Այս անգամ դուք պետք է ճանաչեք Իմ Ձայնը:
Մինչև հիմա պեք է իմանայիք, թե ինչպես եմ Ես խոսում, քանի որ ձեզ տրվել է Սուրբ Գիրքը:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Այնքան շատ կեղծ կրոններ և կեղծ ուսմունքներ են ստեղծվել մարդկության երևակայությամբ, որ հիմա վարակում են աշխարհը

Ուրբաթ, 29 հունիսի, 2012թ, առավոտյան ժ 09:20

Ձավակս, մի սարսափելի խավար է իջնում աշխարհի վրա, մինչ ուրացությունը, որը պահում է այն, խորանում է:
Աստծո հանդեպ սերը նետվել է մի կողմ:
Աստծո հանդեպ սերը նվազել է, իսկ նրա տեղում սեփական անձի հանդեպ սերն է:
Ագահությունն ու իշխանության հանդեպ սերը ներթափանցում են ամենուր, իսկ սեփական անձի հանդեպ ուշադրությունը հիացմունքի է արժանանում և ընդունվում որպես կյանքն ապրելու ճիշտ ձև:
Ձավակներս, այս ժամանակ է, որ պետք է աղոթեք, օգնելու համար լուսավորելու այն հոգիներին, որոնք խավարի մեջ են:
Նրանք չգիտեն Իմ Որդու Ձոհաբերության մասին Ճշմարտությունը, ոչ էլ այն թե ինչի համար էր Նրա սարսափելի Խաչելությունը:
Նրա Փրկության Ընծան մի կողմ է նետվել, ասես այն չի էլ եղել: Իսկ նրանք, ովքեր գիտեն, թե ինչի համար էր Խաչի վրա Նրա Մահը, որոշել են փնտրել այլ կեղծ աստվածների, որ իրենց խաղաղություն բերեն: Նրանք երբեք չեն հասնի այդպիսի խաղաղության:
Հոգու խաղաղության կարելի է հասնել միայն Իմ Որդու հանդեպ հավատարմությամբ և աղոթքի միջոցվ:
Միայն սրտով մաքուրներն ու խոնարհները, ովքեր իրենց ամբողջ վստահությունը դնում են Նրա վրա, կարող են հավիտենական կյանք ունենալ:
Այնքան շատ կեղծ կրոններ և կեղծ ուսմունքներ են հիմա վարակում երկիրը՝ ստեղծված մարդկության երևակայության կողմից:
Այնքան շատերն են առաջնորդվում վտանգավոր կեղծ հավատալիքներով, որոնք կորած հոգիներին կառանորդեն դեպի դժոխք:
Ընկած հրեշտակներն ամենուր են, զավակներս: Ձգոն եղեք, քանի որ նրանք թիրախ կդարձնեն հատկապես բոլոր նրանց ովքեր պատվում են Ինձ՝ ձեր Սիրող Մորը, որպեսզի ձեզ խառնաշփոթի մեջ գցեն:
Նրանք կխանգարեն ձեզ աղոթել: Նրանք մշտական կասկածներ կդնեն ձեր մտքի մեջ Աստծո Սիրո մասին: Նրանք կշեղեն ձեր ուշադրությունը զգայարանների

գայթակղության միջոցով: Շատ աղոթքի կարիք կլինի նրանց հեռու քշելու համար: Իմ Վարդարանը ձեր ամենակարևոր պաշտպանությունն է:
Իմ Որդին, այս ժամանակ, շատ շնորհներ է նվիրում նրանց, ովքեր լսում են, ընկալում և ընդունում աշխարհին տրվող Նրա Սուրբ Պատգամները:
Նա անում է դա, որպեսզի ձեզ զորություն և տոկունություն տա հավիտենական կործանումից մարդկությանը փրկելու այս առաքելության մեջ:
Ընդունեք այդ շնորհները սիրով, զավակներս, քանի որ դուք հատուկ եք, որ ընտրել եք հետևելու Նրան այս ժամանակ:
Որպես երկրի վրա Նրա Մնացորդ Եկեղեցի դուք կարիք կունենաք կյանքի հացին միշտ, քանի որ ձեզ համար հեշտ չի լինի այս ճամփորդությունը:
Ահա մի հատուկ Խաչակրաց արշավանքի աղոթք՝ այս առաքելության մեջ ձեզ ուժեղ պահելու համար.

Խաչակրաց արշավանքի աղոթք (63) Պաշտպանիր ինձ այս ճամփորդության ընթացքում

Իմ սիրելի Մայր Փրկության, ես խնդրում եմ Քեզ աղոթել, որ
Ինձ տրվի Կյանքի Սնունդը՝ պահելու համար ինձ այս ճամփորդության ընթացքում.
Օգնելու փրկել Աստծո բոլոր զավակներին:
Խնդրում եմ օգնիր բոլոր նրանց, ովքեր խաբվում են կեղծ կուռքերով և կեղծ աստվածներով,
Որ բացեն իրենց աչքերը Խաչի վրա Քո Որդու մահվան Ճշմարտության հանդեպ՝
Փրկելու համար Աստծո զավակներից յուրաքանչյուրին , և յուրաքանչյուրին հավիտենական կյանք բերելու համար:
Ամեն
Ձեր Սիրող Մայր
Մայր Փրկության